ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ
Համալսարանական խորհուրդ
նիստ 10
12 դեկտեմբերի 2022 թ.

Հաստատում եմ
Ռեկտոր _____ Ս. Լ. Հարությունյան
12 դեկտեմբերի 2022 թ.

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**ԵՐԵՎԱՆ 2022**

Ձեռնարկը նախատեսված է համալսարանի ներքին ու արտաքին շահակիցների համար: Այն կոչված է բարձրացնելու բուհի շահակիցների տեղեկացվածությունը որակի ապահովման քաղաքականության և դրա իրականացման չափանիշների, չափորոշիչների, մեխանիզմների ու գործիքակազմի հետ:

**Ձեռնարկը վերանայվել է 2022 թ.**

# Բովանդակություն


**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3**

ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 4

**1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 6**

1.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ..... 6

1.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ..... 8

1.3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ ..... 9

1.4. ԵՀՀ 2021-2025 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ..... 10

**2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 14**

2.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 14

2.2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈԴԵԼԸ ..... 15

2.3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 16

2.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 16

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ..... 17

2.6. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ..... 19

2.7. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 19

**3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ,ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ..... 20**

3.1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 20

3.2. ՄԿԾ-ՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ..... 21

**4. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ..... 25**

4.1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ..... 25

4.2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ..... 25

4.3. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ..... 26

**5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 27**

5.1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 27

5.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԿԱՐԳ ..... 27

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 46**

Հավելված 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ..... 46

Հավելված 2. ԵՀՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ..... 49

Հավելված 3. ԶԿՈԱԿ-ի հարցումները ..... 51

Հավելված 4. ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ..... 55

Հավելված 5. ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ ..... 59

Հավելված 6. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ ..... 63

Հավելված 7. ԵՀՀ ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 68

Հավելված 8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԿԾ-ՆԵՐԵՐԻ ՑԱՆԿ ..... 71

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 71


Շապիկի պատկերը՝ Արշիլ Գորկի (1904-1948) «Բարի հույսի ճանապարհ» (1945)

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգի բարեփոխումների առաջնահերթ խնդիրը կրթության որակի ապահովումն է: Որակի ապահովման սույն ձեռնարկը մշակվել է այդ խնդրի լուծմանը նպաստելու և համալսարանի բոլոր շահակիցների ջանքերը համախմբելու նպատակով: Այն ներառում է բուհում կրթության որակի ապահովման գործընթացի քաղաքականության կենսագործման նպատակով մշակված փաստաթղթային փաթեթը և միջազգային ու ազգային չափանիշներն ու չափորոշիչները:

Ձեռնարկը նպատակ է հետապնդում օգնել ուսանողներին, դասախոսներին, վարչական անձնակազմին, ինչպես նաև արտաքին շահակիցներին՝ իրազեկված լինել կրթության որակի ապահովման գործընթացների մասին և սեփական ներդրումն ունենալ իրականացվող բարեփոխումներում:

Ձեռնարկը բաղկացած է 5 գլուխներից և հավելվածներից: Առաջին գլխում համառոտ ներկայացված են համալսարանի անցած ուղին, բուհի առաքելությունն ու 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիրը և դրանց կապը որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման հետ:

Երկրորդ գլխում ներկայացվում է համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը, համակարգի ստեղծման սկզբունքները, մոդելը, չափանիշները, որակի ներքի նապահովման համակարգի կառուցվածքը, խնդիրներն ու գործառույթները, որակի մշակույթի ձևավորման նպատակները և ինքնավերլուծության դերը՝ որակի ապահովման համակարգում:

Երրորդ գլխում շարադրված են մասնագիտական կրթական ծրագրերի ու դասընթացների մոդուլների մշակման սկզբունքներն ու դրանց հաստատման, մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգերը:

Չորրորդ գլխում համառոտ ներկայացված է կրեդիտային համակարգի էությունն ու գործառույթները:

Հինգերորդ գլուխը նվիրված է ուսանողների գնահատման համակարգին և ռոտացիայի կարգին, այդ թվում՝ ակադեմիական ազնվության ապահովման խնդիրների լուծման հարցերի լուսաբանմանը:

Հավելվածներում բերված են համալսարանի Զարգացման և կրթության որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը, որակի ապահովման քաղաքականությունը և իրականացման ընթացակարգերը, բենչմարքինգի քաղաքականությունն ու ընթացակարգը, արտաքին ու ներքին շահակիցների հետ անցկացվող ուսումնասիրությունների հարցաշարերը, ուսանողի իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Ձեռնարկը մշակելիս առաջնորդվել ենք Բոլոնյան հռչակագրի պահանջներով, «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի էստոնական գործակալության» (EKKA), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանիև ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի, Շվեդիայի Լունդի Համալսարանի, Իսպանիայի Վալենսիա Համալսարանի, Չեխիայի Կարլի Համալսարանի, Շվեցարիայի Ցյուրիխի Համալսարանի համապատասխան ձեռնարկներով և ուղեցույցներով:

## ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հապավումներ

| | |
|---|---|
| ԲՈՒՀ | Բարձրագույն ուսումնական հաստատություն |
| ԵԲԿՏ | Եվրոպական բարձրագույն կրթության տարածք |
| ԵԿՓԿ/ECTS | Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ / European Credit Transfer and Accumulation System |
| ԵՀՀ | Երևանի «Հայբուսակ» համալսարան |
| ԵՍՈՒ/ESG | Եվրոպական ստանդարտների ուղեցույց |
| ՄԿԾ | Մասնագիտության կրթական ծրագիր |
| ՄՈՒՀ | Մասնագիտական ուսումնական հաստատություն |
| ՄՈԳ | Միջին որակական գնահատական |
| ՈԱ | Որակի ապահովում |
| ԶԿՈԱԿ | Համալսարանի զարգացման և կրթության որակի ապահովման կենտրոն |
| ՈԱԾ | Որակավորումների ազգային շրջանակ |
| ՈԵԾ | Որակավորումների եվրոպական շրջանակ |
| ՈՆԱՀ | Կրթության որակի ներքին ապահովման համակարգ |
| ՊԻՍԲ | Պլանավորել, իրականացնել, ստուգել, բարելավել |
| ՈՒԹՀՎ/SWOT | ՈՒժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ/ Strengths, Weaknesses, Opportunities, Threats |

### Հասկացություններ

**Բենչմարքինգ** - համանման կազմակերպությունների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ սեփական ՄՈՒՀ-ում ներդնելու նպատակով:

**ԵԿՓԿ/ECTS կրեդիտ** – ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության չափման պայմանական միավոր, որն արտահայտում է դասընթացի կամ կրթական մոդուլի ելքային արդյունքի ձեռքբերման համար պահանջվող ժամաքանակը և տրվում է ուսանողին արդյունքների դրական գնահատման դեպքում: Մեկ ECTS կրեդիտը համարժեք է ուսումնառողի 30 ակադեմիական ժամ ուսումնական բեռնվածությանը, այդ թվում՝ լսարանային, արտալսարանային պարապմունքները և ինքնուրույն աշխատանքը:

**Կոմպետենցիա/կարողունակություն** - գիտելիքի, կարողությունների, հմտությունների ամբողջություն, որը կարող է լինել ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանրական:

Կրեդիտային համակարգ- ուսումնական գործընթացի կազմակերպման, կրեդիտների հատկացման միջոցով ուսումնառության արդյունքների արժևորման կամ հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորման աստիճան է շնորհվում՝ կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի ձեռքբերման արդյունքում:

**Կրեդիտների կուտակման և փոխանցման ԵԿՓԿ/ECTS համակարգ** - եվրոպական միասնական կրեդիտային համակարգ, ըստ որի՝ ուսանողի ուսումնական տարեկան բեռնվածքը սահմանված է 60 ECTS կրեդիտ (1800 ժամ): Այն Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ստացած կրթական արդյունքների պաշտոնական ճանաչման և նրանց ակադեմիական շարժունության ապահովման փոխադարձ ընդունելի համակարգ է:

**Կրթական մոդուլ** - դասընթացի ծրագրի նվազագույն և համեմատաբար ինքնուրույն միավոր է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի տևողությունը մեկ կիսամյակ է, դրանով

սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

**Մասնագիտության կրթական ծրագիր (ՄԿԾ)** – բարձրագույն կրթության հիմնական բաղադրիչ, որը ներառում է կրթության բովանդակությունը և բնագավառում կատարվող բոլոր գործընթացները՝ ուսուցման կազմակերպում, իրականացում, կառավարում, ուսումնառություն, հետազոտություն:

**Միջին որակական գնահատական (ՄՈԳ)** - գնահատականների՝ կրեդիտներով արտահայտված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորը բաժանելով գնահատված կրեդիտների վրա՝ 1/100 ճշտությամբ:

**Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)** - ազգային մակարդակում ուսումնառության արդյունքների որակավորումների ճանաչումը ապահովող գործիք, որը ստեղծված է ՈԵՇ-ի հիմնադրույթների հիման վրա:

**Որակավորումների եվրոպական շրջանակ (ՈԵՇ)** - որակավորումների տարբեր համակարգերը համադրելու և աշխատաշուկայի հետագա ինտեգրումը խթանելու գործիք:

**Որակ** – կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների

**Որակի մշակույթ** - հաստատության բոլոր ստորաբաժանումների և շահակիցների ներգրավվածություն՝ կրթության որակի բարելավման գործընթացներումն յուրաքանչյուրի պատասխանատվության ստանձնում՝ դրանց իրականացման համար:

**Չափորոշիչ** - նախապես սահմանված ակնկալիք, ստանդարտ:

**Վարկանիշային միավոր** - բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարը:

**Վերջնարդյունք** - կրթական ծրագրի կամ ինստիտուցիոնալ որևէ նպատակի իրագործման արդյունք:

# 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

## 1.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը հիմնադրվել է 1990 թ. ակադեմիկոս Լևոն Հարությունյանի կողմից և 1991 թ. ՀՀ կրթության և գիտության ու առողջապահության նախարարությունների կողմից ստացել է կրթական գործունեության լիցենզիա: Համալսարանը 1999-2001 թվականներին մասնակցել է ՀՀ-ում կրթության որակի գնահատման և պետական հավատարմագրման գործընթացին և ստացել պետական հավատարմագիր, ինչը համալսարանի շրջանավարտներին թույլ է տալիս ստանալ պետական նմուշի դիպլոմներ և աշխատել ՀՀ և արտերկրի պետական ու մասնավոր հիմնարկներում, ինչպես նաև շարունակել կրթությունը ՀՀ-ի և արտերկրի հետբուհական կրթական կառույցներում (ասպիրանտուրա, դոկտորանտուրա, օրդինատուրա): **Համալսարանի շրջանավարտները աշխատում են ԱՊՀ-ի գրեթե բոլոր հանրապետություններում, ԱՄՆ-ում, Եվրոպայում, Իսրայելում, Հնդկաստանում, Միրիայում, Լիբանանում, Իրանում, Քուվեյթում և այլն:** 2006 թ. համալսարանը Գյումրիում հիմնադրել է ներկայացուցչություն: «Հայբուսակ»-ը ՀՀ-ում միակ համալսարանն է, որը կրթության զարգացման և որակի ապահովման նպատակով իր շուրջն է միավորել մասնավոր՝ պետության կողմից հավատարմագրված այլ համալսարաններ: Այսպես, 2006-2013 թթ. «Հայբուսակ» համալսարանին միավորվել են Հ. Լազարյանի անվան միջազգային հարաբերությունների ինստիտուտը, Լ. Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանը, «Ռոսլին» արվեստի ինստիտուտը, Երևանի էկոլոգիայի, տնտեսագիտության և իրավունքի հայկական ինստիտուտը:

2012 թ. համալսարանի և Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանի միջև կնքվել է համատեղ բակալավրի կրթական ծրագրեր իրականացնելու համագործակցության պայմանագիր, ինչն արժանացել է ՀՀ ԿԳՆ հավանությանը և վավերացվել նախարարի կողմից:

«Հայբուսակ» համալսարանը ՀՀ մասնավոր բուհերի առաջատարն է ինչպես իրականացվող կրթական ծրագրերի, այնպես էլ՝ ուսանողների թվով: Այժմ բուհում կրթություն են ստանում մոտ 3000 ուսանողներ Հայաստանից և արտերկրից: «Հայբուսակ»-ը ՀՀ-ում այն եզակի համալսարաններից է, որտեղ կրթությունը իրականացվում է 3 լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն և միակն է, որը իրականացնում է Բոլոնիայի հռչակագրում ամրագրված վեց աստիճանով կրթությունը:

1997 թվականից համալսարանում գործում է բազային քոլեջ՝ 2007 թ. պետության կողմից հավատարմագրված միջին մասնագիտական կրթական ծրագրերով: 2010 թվականից քոլեջը հանդիսանում է UNESCO-ի միջնակարգ կրթական հաստատությունների ասոցիացված անդամ:

2007 թվականից «Հայբուսակ» համալսարանում գործում է ավագ դպրոց, որի շրջանավարտները ստանում են պետական ատեստատներ:

Համալսարանը սկսեց արձանագրել մի շարք ձեռքբերումներ ու նվաճումներ. զգալիորեն ընդլայնվեցին կապերն արտերկրի կրթօջախների հետ, ուսանողների համակազմը համալրվեց սփյուռքահայ և օտարազգի ուսանողներով, ներդրվեցին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր՝ բոլոր գործող մասնագիտություններով:

Գործում է նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը՝ «բուժական գործ», «ստոմատոլոգիա» մասնագիտությունների համար:

1995 թվականից համալսարանում հիմնական ուսումնական գործընթացն իրականացվում է Երևանի Աբելյան 6 հասցեի սեփական մասնաշենքում, որում ապահովված են ժամանակակից կրթությանն անհրաժեշտ բոլոր պայմանները: 1996 թվականից նույն հասցեում գործում է համալսարանի ստոմատոլոգիական պոլիկլինիկան, 2006 թվականից՝ ժամանակակից

սարքավորումներով կահավորված մարզադահլիճը, էլեկտրոնային գրադարանը, 2019 թվականից սիմուլացիոն կենտրոնը: Նույն հասցեում կառուցվել է եռահարկ մասնաշենք, որտեղ մատուցվում են հոգեբանական աջակցության ծառայություններ բարձրակարգ մասնագետների միջոցով՝ ուսանողների ընդգրկվածությամբ: Գործում են նաև դասապատրաստումների ծառայություններ՝ միջին և ավարտական դպրոցի աշակերտների համար:

2006 թ. հինգ համալսարանների միավորման արդյունքնում, անհրաժեշտությունից ելնելով, ձեռքբերվեց համալսարանի 2-րդ սեփական մասնաշենքը (Գրիբոյեդով 15): Մասնաշենքը վերանորոգված և կահավորված է ժամանակակից տեխնիկական միջոցներով և ունի բոլոր անհրաժեշտ պայմանները արդի կրթություն ապահովելու համար: Համալսարանի կարևորագույն նվաճումներից է 3-րդ մասնաշենքի ձեռքբերումը՝ 2018 թ. «Հայբուսակ կլինիկա» (Երևանի Ադոնցի 18/1), որը բազմապրոֆիլային կլինիկա է և ծառայելու է բժշկական մասնագիտությունների ուսանողների գործնական, պրակտիկ հմտությունների ձևավորմանը:

Բուհի ռազմավարական խնդիրներից է՝ զարգացնել արտերկրի համալսարանների հետ կապը: Այդ նպատակով համալսարանը մասնակցել է 20-ից ավելի միջազգային կրթական ցուցահանդեսների՝ Երևանում և արտերկրում: Հաստատվել են կապեր՝ Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի (2004 թ.), Լիբանանի Ալ Ջինան համալսարանի (2005), Վենետիկի «Պո-Արաքս» կազմակերպության, Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և մշակույթի ամառային դասընթացների (2005 թ.), ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի (The US Embassy Public Affairs Section, BAR-Ամերիկյան փաստաբանների միություն, Գերազանց բիզնես-գործունեության իններորդ միջազգային ֆորումի Ժնևում (2005 թ.), Մոսկվայի բժշկական ռեաբիլիտոլոգիայի ինստիտուտի (2001 թ.), Միջազգային կրթության ամերիկյան խորհրդի (2007 թ.), «Էլ Արկա» կրթամշակութային հաստատության (2012 թ.) հետ, Մենեջմենթի եվրոպական դպրոցի հետ (European School of Management) (Իսպանիա), Պրեստոնի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Լուիզիանայի համալսարանի (ԱՄՆ), Քեմբրիջի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Բիզնեսի և հաղորդակցության դպրոցի (Իսպանիա), Դաչ Դելտա համալսարանի (Հոլանդիա), Նյուրնբերգի միջազգային բիզնես դպրոցի (Գերմանիա), ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի հետ:

2019-2020 ուստարում Հնդկաստանում բացվել է համալսարանի ներկայացուցչություն, իսկ 2020-2021 թթ ուստարում ներկայացուցչությունների քանակն դարձել է 7 Հնդկաստանի տարբեր նահանգներում:

Համալսարանը ստորագրել է փոխըմբռման հուշագիր ՏԻՐԻ (TIRI) կազմակերպության (Մեծ Բրիտանիա - 2011 թ.), Կանադայի ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի International Informatization Academy (2007), Ռուսաստանի Բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի հետ (2016 թ.), հանդիսանում է Հայ-Կանադական առևտրային պալատի անդամ (2009): Փոխըմբռնման հուշագիրներ, պայմանագրեր և համաձայնագրերր են կնքվել նաև Վարշավայի Հումանիտար համալսարանի (2019), Լեհաստանի բիզնեսի և վարչարարության համալսարանի (2019), Տալինի առողջապահական քոլեջի (Էստոնիա) (2015), Շվեյցարիայի Բաց համալսարանի (2017), Զապորոժյեի պետական համալսարանի/Ուկրաինա-2020, Ի. Սեչենովի անվան առաջին պետական բժշկական համալսարանի (2018), Մենեջմենթի եվրոպական դպրոցի (Իսպանիա-Տեներիֆե) (2015), Տաջիկստանի Ավիցեննայի պետական բժշկական համալսարանի (2020), Ամերիկայի միջազգային բիզնես դպրոցի (Բրազիլիա) (2017), Շրի Վենկաթեշվարա համալսարանի (2020), Բալթիկ միջազգային ակադեմիայի (2020), Դնեպրի ավանդական և ոչ-ավանդական բժշկական ինստիտուտի (2020), Վրաստանի տեխնիկական համալսարանի (2021),

Վրաստանի ամերիկյան համալսարանի (2021), Լեհաստանի Սզցզեցին համալսարանի (2021) և Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարանի (2021) հետ:

Երկար տարիներ համալսարանը համագործակցում է Tempus, Erasmus+ ծրագրերի երևանյան գրասենյակների հետ, որի արդյունքում ստացել է մի քանի դրամաշնորհներ ուսանողների շարժունության, դասախոսների փորձի փոխանակման և այլ նպատակներով:

2020 թ. Erasmus+ ծրագրով համալսարանը իրականացնում է Simulation in undergraduate medical education for improvement of safety and quality of patient care (SAFEMED+) ծրագիրը, որը միտված է զանգացնել ուսանողների պրակտիկ կարողությունները Համալսարանի սիմուլացիոն կենտրոնում:

Համալսարանի իրականացվող միջազգայնացման քաղաքականության արդյունքում վերջին տարիներին նկատվում է արտասահմանցի ուսանողների թվաքանակի աճ: Այսօր համալսարանը արտասահմանցի ուսանողների թվով առաջիններից է Հայաստանում:

Համալսարանը խրախուսում է դասավանդող կազմի և ուսանողների միջազգային շարժունությունը՝ մշտապես կատարելագործելով նրանց՝ արտերկրի համալսարանների և գիտական կենտրոնների հետ համագործակցությունը (օտար լեզուների և մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում և ֆինանսավորում, գիտաժողովների մասնակցության ֆինանսավորում, աշխատավարձի բարձրացում):

Դասավանդող կազմի միջազգային շարժունության ցուցանիշները վերջին 5 տարում աճման միտում են ցուցաբերում: Միջին հաշվով տարեկան մոտ 3 տասնյակ դասախոսներ մասնակցում են միջազգային գիտաժողովների, կատարում են հետազոտական, ստեղծագործական աշխատանքներ արտերկրի համալսարաններում և գիտական կենտրոններում: Աճել է նաև հրավիրյալ դասախոսների թվաքանակը: Այժմ համալսարանում դասավանում է արտերկրի 36 դասախոս՝ Հնդկաստանից, ԱՄՆ-ից, Իրաքից, Լիբանանից, Ավստրալիայից, Իրանից, Սիրիայից, Մալդիվյան կղզիներից և Սերբիայից:

Այլ երկրների բուհերում ուսումը շարունակելու նպատակով համալսարանից տեղափոխվել են 66 ուսանող՝ վերջին երեք տարիների ընթացքում: Վերջիններս հաջողությամբ հաստատել են իրենց ակադեմիական փաստաթղթերը և շարունակում են կրթությունը արտերկրի բուհերում:

Հավատարիմ լինելով Բոլոնյան գործընթացի պահանջներին Համալսարանը դիմել է «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի էստոնական գործակալությունը» (HAKA)-ին հավատարմագրում անցնելու նպատակով, որի արդյունքում ստեղծվել և շարունակվում է արդյունավետ համագործակցություն. մեծապես բարելավվել են համալսարանում գործող ՄԿԾ-ները, ռազմավարական կառավարումը, միջազգայնացման գործընթացները, դասավանդող կազմի վարկանշանային գնահատումը և այլ: 2019 թվականին ԵՀՀ-ն HAKA-ի գնահատմամբ (նախկին անվանումը՝ EKKA) անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

## 1.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համալսարանում գործում են Բժշկական, Տնտեսագիտական, Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ինստիտուտները և «Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիան (Գծապատկեր 1):

Համալսարանում գործում են՝ 21 ամբիոններ, որոնք ենթարկվում են համապատասխան ինստիտուտներին, իսկ գիտական հարցերով՝ գիտական գծով պրոռեկտորին:

*Գծապատկեր 1. ԵՀՀ ստորաբաժանումները*




## 1.3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Կրթության որակի ապահովման առաջնահերթությունը ներկայացված է համալսարանի առաքելությունում: ԵՀՀ-ն կրթական և հետազոտական ինքնավար հաստատություն է, որի **առաքելությունն է.** միավորելով մասնավոր ու պետական կրթության համակարգերի լավագույն կողմերն ու որակները՝ Երևանի «Հայբուսակ» համալսարանը բոլոր մասնակիցներին ընձեռում է հնարավորություն իրենց ներուժն իրագործելու՝ որպես բազմակողմանի զարգացած մասնագետներ, ստեղծագործ մտածողներ և իրենց համայնքների կյանքը բարելավող քաղաքացիներ:

**ԵՀՀ տեսլականն է.** *հազարավոր տաղանդավոր, բանիմաց և հոգատար մասնագետներ ու գիտնականներ՝ կրթված ազատ ակադեմիական տարածքում, որոնք հետևողականորեն բարելավում են մարդկանց ու համայնքների բարեկեցությունը և խնամում են շրջակա միջավայրը:* Զգտելով այդ տեսլականին՝ համալսարանը կլինի Հայաստանում առաջատար ուսումնական և գիտահետազոտական հաստատություն՝ միջազգայնորեն ճանաչված կրթության որակով, և որտեղ ուսանողները հնարավորություն կունենան սովորելու աշխարհի առաջատար համալսարանների դասախոսներից, գիտնականներից, հանրահայտ գործարարներից և միջազգային ու տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Համալսարանն իր առաքելությունն իրագործելիս առաջնորդվում է հետևյալ **արժեքներով**.

- Ակադեմիական ազատությունը ու ինստիտուցիոնալ ինքնավարություն
- Բազմազանությունը, հավասարեցումը և ներառականություն
- Ակադեմիական և անձնական զարգացում
- Ազնվություն և հաշվետվողականություն
- Պատասխանատվություն հետազոտական ոլորտում
- Ակադեմիական և քաղաքացիական առաջնորդություն հասարակությանը ծառայելու գործում:

## 1.4. ԵՀՀ 2021-2025 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բուհն իր առաքելության իրականացման համար մշակում և իրականացնում է ռազմավարական, միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր: Դրանք փոխկապակցված են: Համալսարանի առաքելությունը, ռազմավարական ծրագիրը, որակի ապահովման քաղաքականությունը մշակվել և իրականացվում են Բոլոնյան գործընթացնեով նախատեսված բարեփոխումներին համաքայլ ընթանալու հրամայականից ելնելով: ԵՀՀ-ն իրականացնում է Բոլոնիայի համաձայնագրում ամրագրված վեց աստիճանով կրթությունը:

2005 թ. Հայաստանը, միանալով Բոլոնյան գործընթացին, սկսեց ինտեգրվել եվրոպական միասնական կրթական համակարգին: Այդ գործընթացի վերջնարդյունքը պետք է լինի բարձրագույն կրթության բոլոր աստիճաններում (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա և դոկտորանտուրա) եվրոպական համընդհանուր սկզբունքների ամրագրումն ու որակի ապահովումը:

Բուհի ռազմավարությունը բխում է ՀՀ օրենսդրությունից, ՀՀ բարձրագույն կրթության ռազմավարությունից և համալսարանի կանոնադրությունից: Ռազմավարական ծրագրի (ՌԾ) նպատակների իրականացումը ենթադրում է որդեգրել բարեփոխումների առավել նպատակասլացությունը և արդյունավետությունը ապահովող ռազմավարական մոտեցումներ:

Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ուղղություններն ու նպատակներն են.

**Ուղղություն 1. Ստեղծել ուսանողների և դասավանդող կազմի ակադեմիական և մասնագիտական զարգացմանը նպաստող ներդաշնակ միջավայր**

1.1. Օգտագործելով նորարարական մոտեցումներ՝ արդիականացնել ՄԿԾ-ները և համալրել ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական բազաները
1.2. Զարգացնել համալսարանի գիտահետազոտական կարողությունները
1.3. Արմատավորել ուսանողակենտրոն ուսուցման համակարգ
1.4. Ներդնել ակադեմիական շարժունության ծրագրերի համակարգ
1.5. Ընդլայնել ԵՀՀ-ի արտաքին հարաբերությունները և տեղական և միջազգային շահակիցների մասնակցությունը:

**Ուղղություն 2. Ստեղծել ուսանողների քաղաքացիական դաստիարակության միջավայր**

2.1. Ձևավորել ուսանողների հասարակական կյանքի իրավասությունների և կարողությունների զարգացման միջավայր
2.2. Զարգացնել հաշվետվողականության համակարգեր
2.3. Զարգացնել պատասխանատվությունն ու հոգատարություն շրջակա միջավայրի հանդեպ
2.4. Ներդնել համայնքային զարգացմանը նպաստող մեխանիզմներ
2.5. Ներդնել ամբողջ կյանքում ուսումնառության համակարգ:

ՌԾ-ն դրույթների ամբողջություն է միտված՝ ԵՀՀ ներկա վիճակի ու առկա հիմնախնդիրների նկարագրմանը և ըստ երկու հիմնական ուղղությունների՝ ԵՀՀ հեռանկարային զարգացման ապահովմանը: Բոլոր նպատակները սահմանվել են ԵՀՀ ընդհանուր առաքելության և տեսլականի, ինչպես նաև որդեգրած արժեքների համատեքստում: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար սահմանվել են մի շարք խնդիրներ: Հեռահար նպատակներին հասնելու համար իրականացվող շարունակական բարեփոխումների արդյունքում ստեղծվում է արդյունավետ կառավարման համակարգի և զարգացումների համար բարենպաստ միջավայր:

Ուսուցման որակի բարձրացումը և կրթական ծրագրերի արդիականությունը առաջնահերթ կարևորություն ունեն ԵՀՀ-ի մասնագիտական բարձր վարկանիշի, նրա ներքին և արտաքին մրցունակության ապահովման համար:

**ԵՀՀ-ի այցեքարտն ուսուցման որակն է և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ ու քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը**, և ԵՀՀ-ի մրցունակությունը և վարկանիշը որոշում են իրականացվող կրթական ծրագրերի որակը, վարչական և դասավանդող կազմը և ուսանողների ու շրջանավարտների կողմից իրենց մասնագիտական ու էթիկական պարտականությունների կատարումը: Այս առումով հատկապես կարևորվում են ուսուցման որակի ապահովման ներքին համակարգի զարգացումը, առաջարկվող կրթական ծրագրերի (մասնագիտությունների անվանացանկի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի) կանոնավոր վերանայումն ու համապատասխանեցումն աշխատաշուկայի արդի պահանջներին:

Նկատի ունենալով, որ ԵՀՀ-ի զարգացման առանցքային ուղղությունը շարունակում է մնալ **ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) սկզբունքներին**, ԵՀՀ-ն ձգտում է Եվրոպական ստանդարտների ուղեցույցի (ESG) պահանջներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ներդնում, «թյունինգյան» մեթոդաբանության հենքով ուսումնական պլանների վերակառուցում՝ ըստ կրթական վերջնարդյունքների: Առկա պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ԵՀՀ-ի նախապատրաստումը ծրագրային հավատարմագրման գործընթացներին: Այդ նպատակին հասնելու համար կարևոր են. ուսուցման որակի գնահատման և ապահովման ներքին համակարգի զարգացումը՝ որակի ներքին արժևորման եվրոպական ESG պահանջներին համապատասխան, նոր ծրագրերի փուլային ներմուծումը՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ և նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների ապահովումը՝ դասավանդման և ուսումնառության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացման համար:

Համալսարանում, որպես ուսումնական, գիտական և կառավարման գործընթացներում **տեղեկատվական տեխնոլոգիաներ**ի արդյունավետ օգտագործման ու ինտեգրման նախապայման, կարևորվում են սեփական տեխնիկական միջոցների և տեղեկատվական ռեսուրսների զարգացման գործընթացի ապահովումը և շարունակական բարելավումը:

Ժամանակակից տեխնոլոգիաները ԵՀՀ-ի շփումները և երկխոսությունը օտար երկրյա գիտակրթական հաստատությունների հետ դարձնում են առավել մատչելի ու արդյունավետ: Նման միջոցառումները նպաստում են համալսարանի միջազգային համագործակցության զարգացմանը, փորձի փոխանակմանը և գիտակրթական առավել արդյունավետ համակարգերի ներդրմանը, դասավանդող կազմի և ուսանողների շփումների ընդլայնմանը օտարերկրյա գործընկերների հետ: Այդ առումով կարևոր է տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ կիրառման ապահովումը՝ կրթական և գիտական ծրագրերում, ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսների զարգացման, արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համահունչ:

**Դասավանդող կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը** հանդիսանում են ռազմավարական կարևորության թիրախներ: Պակաս կարևոր չեն նաև դասավանդողների և վարչակազմի կայուն և որակյալ համալրման, հաստիքային հստակ պլանավորման ու մասնագիտական կատարելագործման հիմնախնդիրները:

Կադրերի ներուժը ուսումնասիրելիս հաշվի է առնվում նրանց պատրաստվածության փաստացի մակարդակը և գիտամանկավարժական որակները աշխատանքի փորձառության, գործարար ակտիվության, գործունեության որակի և արդյունքների, նորարարությունների նկատմամբ ճկունությունը: Այդ նպատակով պարբերաբար իրականացվում է դասավանդող կազմի կողմից մասնագիտական գործունեության մոտիվացիոն հիմքերի ուսումնասիրություն:

ԵՀՀ-ի զարգացման նոր խնդիրներն ու ծրագրերը պահանջում են կատարելագործել նաև ԵՀՀ-ի **կառավարման համակարգը** և բարձրացնել նրա արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը: Այն պետք է ապահովի ԵՀՀ-ի գործունեության հիմնական բնագավառների կառավարման գործընթացների ներդաշնակեցումն ու ակտիվ համագործակցությունը, լիազորությունների և պատասխանատվությունների օպտիմալ բաշխումը, որոշումների ընդունման թափանցիկությունն ու կոլեգիալությունը, ինչպես նաև, Բոլոնիայի սկզբունքներին համահունչ, ուսանողական ինքնավարության զարգացումը: Կառավարման արդյունավետության և որակի բարձրացման առումով ԵՀՀ-ն կարևորում է կառավարման համակարգի պարբերաբար կատարելագործումը:

Արդի պայմաններում կարևորագույն խնդիր է հանդիսանում նաև ԵՀՀ-ում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովումը, դասախոսական անձնակազմի և ուսանողության միջև փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված թափանցիկ աշխատանքային փոխհարաբերությունների ձևավորումը, համատեղ կոլեգիալ պատասխանատվության զգացումի սերմանումը:

Յուրաքանչյուր դասախոս, աշխատող, ուսանող և շրջանավարտ պետք է գիտակցի իր պատասխանատվությունը ԵՀՀ-ի ներկայի և ապագայի հանդեպ: Ռազմավարական այս նպատակին հասնելու համար ԵՀՀ-ի առաջնահերթություններն են. դասավանդող կազմի բարելավումն ու համալրումը՝ կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ, ինչպես նաև համալսարանի կառավարման համակարգի կատարելագործումն ու դրա արդյունավետության ու որակի բարձրացումը:

**Ուսանողների թվի աճը**, որը սովորաբար բերում է որակական դրական փոփոխություններ, ցանկացած կրթական հաստատության կարևոր նպատակներից մեկն է: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին միջավայրի փոփոխությունները՝ հատկապես դեմոգրաֆիկ, համաճարակային իրավիճակները, աշխատաշուկայի պահանջարկը, տնտեսության զարգացման հեռանկարները, աշխարհաքաղաքական պայմանները և այլ: Այդ ուղղությամբ առաջնահերթ են. ԵՀՀ-ում դիմորդների ընդունելության կառավարչական, կազմակերպչական և կառուցվածքային արդյունավետ համակարգի ներդրումը, դիմորդների և ուսանողների կազմի ընդլայնման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը՝ ժողովրդագրական բացասական միտումների և միջավայրային այլ գործոնների ազդեցության գնահատմամբ և լրացուցիչ ու շարունակական կրթության համակարգի զարգացում միջազգային մրցունակություն ապահովելու համար:

ԵՀՀ-ի բնականոն գործունեության և առաջընթացի կարևորագույն երաշխիքը նրա **ֆինանսական կայունությունն** է, որը կապահովվի ուսանողների թվաքանակի հստակ աճով, այլ վճարովի ծառայությունների և դրամաշնորհների առկայությամբ:

Համալսարանի գործող տնտեսական մոդելը բաղկացած է հետևյալ բյուջետային աղբյուրներից՝ ուսանողների ուսման վարձեր, լրացուցիչ կրթական ծրագրեր, դրամաշնորհային ծրագրեր, հրատարակված դասագրքերի և մեթոդական ձեռնարների վաճառքից գոյացած եկամուտ: Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը և ֆինանսական ներհոսքի մեծացումը շարունակում են մնալ ԵՀՀ-ի համար գերառկա ռազմավարական խնդիրներ, որոնք հաստատությանը նպաստում են դառնալ ավելի նախաձեռնող և ձեռներեց արտաքին միջավայրի հետ փոխհարաբերություններում: Ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից առաջնահերթ խնդիրներն են նաև ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու ռեսուրսախնայողության քաղաքականության հետևողական իրականացումը, ինչպես նաև

նյութատեխնիկական ռեսուրսների հարստացման ուղղությամբ ֆինանսական հատկացումներ պլանավորումը՝ ի նպաստ ուսումնակրթական և գիտահետազոտական գործընթացների հենքի զարգացմանը։ Դրա համար, համալսարանի ստորաբաժանումները վերակազմավորվել են. 2021 թվականին 5 ֆակուլտետներից ձևավորվել են 4 ինստիտուտներ՝ ըստ պրոֆիլների։

**ԵՀՀ-ի արտաքին կապերը** պետք է առավելագույնս ուղղորդվեն ձևակերպված ռազմավարական նպատակների իրագործմանը՝ բոլոր արտաքին շահակիցների հետ նրա բազմակողմանի համագործակցության ընդլայնման և զարգացման միջոցով: Բազմաբնույթ արտաքին կապերի ընդլայնմանը զուգահեռ, ԵՀՀ-ի զարգացմանը նպաստող գործոնների շարքում կարևորվում է հասարակության հետ կապերի ամրապնդումը, ԵՀՀ-ի դրական կերպարի շարունակական ապահովումը: Նման քայլերը կնպաստեն ԵՀՀ-ի զարգացմանն ու գիտակրթական մակարդակի բարձրացմանը, այն առավել գրավիչ կդարձնեն ուսանողների և գործատուների համար՝ լավագույն ուսում և լավագույն կադրեր ձեռքբերելու տեսանկյունից:

Արտաքին կապերի զարգացման առաջնահերթություններն են ԵՀՀ-ի միջազգային կապերի ընդլայնումը և բազմազանեցումը՝ կրթական և գիտական ոլորտներում, համագործակցությունը եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ, նրա համակողմանի ներգրավման խթանումը՝ Բոլոնիայի գործընթացում և ԵՀՀ-ի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների և արտաքին կապերի համակողմանի զարգացման խթանումը:

ԵՀՀ-ի կրթական համակարգի զարգացման և միջազգային կապերի հաստատման կարևորագույն միջոց է Սփյուռքը:

ԵՀՀ-ի կրթական և հետազոտական ծրագրերի պատշաճ մակարդակի ապահովմանը զուգահեռ պակաս կարևորություն չունի **սոցիալական ծրագրերի ամենամյա զարգացումը**: Ռազմավարական ծրագրի հաջողության կարևորագույն գրավականներից է հանդիսանում աշխատողների և ուսանողների շարունակաբար աճող սոցիալական խնդիրներին համապատասխան ծրագրային մասի ապահովումը:

Այսպիսով սոցիալական ծրագրերի ներդաշնակ զարգացումը՝ ներքին և արտաքին շահակիցների, հասարակության տարբեր շերտերի համար լայնածավալ ծրագրերի մշակումը և իրականացումը հանդիսանում է կարևորագույն նախապատվություն ԵՀՀ-ի համար:

# 2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## 2.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը, միանալով Բոլոնյան գործընթացին, աշխատանք սկսեց՝ ՀՀ բարձրագույն կրթությունը եվրոպական միասնական կրթական համակարգին ինտեգրելու ուղղությամբ, որի վերջնարդյունքը պետք է լինի՝ կրթական բոլոր աստիճաններում այնպիսի որակի ամրագրումը, որպիսին ունի եվրոպական կրթական համակարգը: Հետևաբար՝ կրթության որակի ապահովման համակարգի ձևավորումը ժամանակի հրամայական է, ուստի բուհը որդեգրել է որակի ապահովման քաղաքականություն՝ արդի կրթական դաշտում ներդաշնակ գործելու և կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների համապատասխանության հասնելու համար: Այդ քաղաքականությունը բխում է բուհի առաքելությունից և պետք է նպաստի կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը, ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի չափանիշների պահպանմանը՝ կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով: Իսկ քաղաքականության կենսագործման համար բուհում մշակվել են կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր:

Սահմանված նպատակներին հասնելու համար բուհում առկա է համապատասխան կրթական միջավայր՝ անհրաժեշտ ենթակառուցվածքներով և ռեսուրսներով:

Որակի ապահովման (ՈԱ) քաղաքականությունը (հիմք՝ 2016 թ. ԵՀՀ ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր) ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

- որակի ապահովման համար անհրաժեշտ իրավանորմատիվային բազայի ստեղծում,
- որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործում,
- մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում որակի ապահովման պահանջներին, դրանց մշտադիտարկում և շարունակական բարելավում,
- բուհի ստորաբաժանումների կանոնակարգերի և գործունեության վերակառուցում՝ որակի ապահովման խնդիրներից ելնելով, ինչը թույլ կտա բարձրացնել դրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունը որակի բարելավման գործընթացներում,
- միջազգային չափանիշներին կրթության որակի համապատասխանությունը ապահովելու նպատակով՝ համալսարանի ուսումնական ու վարչական անձնակազմի համար վերապատրաստումների կազմակերպում և իրականացում,
- շարունակական բարելավումների միջոցով՝ որակի մշակույթի ձևավորում,
- միջազգային կրթական ասպարեզում Երևանի «Հայբուսակ» համալսարանի բարձր վարկանիշի և մրցունակության ապահովում:

Բուհը կրթության որակն ապահովում է՝ առաջնորդվելով սեփական առաքելությամբ և ռազմավարական ծրագրով: Կրթության որակի ապահովումը ԵՀՀ-ին հնարավորություն է ընձեռում ուսումնառողներին տալ այնպիսի գիտելիքներ, որոնք համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին, ապահովում են կրթական որակավորումների փոխադարձ ճանաչումը եվրոպական կրթական տարածքում և նպաստում ուսանողների, շրջանավարտների, դասախոսների միջազգային շարժունությանը:

Կրթության որակը բազմաչափ և բազմաբովանդակ հասկացություն է, այն ենթադրում է.

ա) կրթական վերջնարդյունքների համապատասխանություն պետական չափորոշիչներին և Հայաստանի ու արտերկրի աշխատաշուկայի կարիքներին,

ս) թողարկվող մասնագետների կարողունակությունների ապահովում:

Որակի ապահովումն ունի երկու չափում՝ ներքին և արտաքին:

### *ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ*

Որակի ներքին ապահովումը պայմանավորված է բուհ առաքելությամբ, նպատակներով, կառավարման համակարգի հստակ ու ճկուն գործելակերպով, մասնագիտական կրթական ծրագրերի որակով, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և կրթական մակարդակով, նյութատեխնիկական բազայով:

Որակի ներքին ապահովումը ենթադրում է հետևյալ քայլերի իրականացումը.

- առաքելության և նպատակների սահմանում,
- ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի և որակի ներքին չափանիշներին համապատասխան՝ ՄԿԾ-ների և առարկայական մոդուլների մշակում,
- եվրոպական ստանդարտների պահանջներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ներդնում, «թյունինգյան» մեթոդաբանության հենքով ուսումնական պլանների վերակառուցում՝ ըստ կրթական վերջնարդյունքների:
- կրթական ծրագրերի վերջնարդյունքների մշտադիտարկում, վերահսկում, գնահատում, բարելավում,
- բուհի ստորաբաժանումների լիազորությունների և պարտականությունների համապատասխանեցում որակի ապահովման պահանջներին, աշխատանքների հստակ պլանավորում, ինչպես նաև հաշվետվողականության և համապատասխան վերլուծության մեխանիզմների մշակում և ներդնում,
- դասավանդող կազմի որակավորման շարունակական կատարելագործում, հետազոտական գործունեության ակտիվացում,
- ենթակառուցվածքների ու ռեսուրսների ապահովում և արդիականացում,
- ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորում,
- որակի ապահովման ներքին համակարգի և որակի մշակույթի զարգացում:

### *ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ*

Որակի արտաքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է եվրոպական կրթական տարածքի պահանջներին, ինչպես նաև կրթության ոլորտում Հայաստանի քաղաքականությանը և ՀՀ բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին: Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- **Թափանցիկություն.** որակի ապահովման գործընթացները հրապարակային են դարձնում բուհի կրթական ծառայությունների իրականացումը երկրի ներսում և նրաս ահմաններից դուրս:
- **Վերահսկում.** բուհը ոչ միայն վերահսկում է ռեսուրսները, այլև ցույց տալիս, որ առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով՝ հասնում է հնարավորինս բարձր որակի:
- **Որակի բարելավում.** որակի ապահովման գործընթացում խնդիրները քննարկվում ու վերլուծվում են ուսումնասիրելով միջազգային փորձը և քայլեր են ձեռնարկում դրանց հաղթահարման ուղղությամբ՝ ապահովելով բուհի շարունակական զարգացումը:

## 2.2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈԴԵԼԸ

Կրթության որակի ապահովման համար բուհը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- որակի գերադասում բոլոր ցուցանիշներից,
- որոշակիություն, հստակություն,

- չափելիություն, վերահսկելիություն,
- բուհի բոլոր ստորաբաժանումների ներգրավվածություն,
- հասանելիություն,
- իրագործելիություն,
- ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն,
- զարգացման կայունություն,
- առավելագույն արդյունավետություն:

Համալսարանի ՈԱ մոդելը մշակվել է կրթության բարեփոխումների, աշխատաշուկայի, հասարակության և եվրոպական կրթական տարածքի պահանջներին համապատասխան.

## 2.3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Հայբուսակ» համալսարանի որակի ապահովման հիմնական չափանիշներն են.

- Համալսարանի վարած քաղաքականության ու ծավալած գործունեության համապատասխանություն իր առաքելությանը,
- համալսարանի կառավարմանհամակարգի, վարչական կառույցների և դրանց ծավալած գործունեության անարդյունավետություն, որը միտված է հաստատության առաքելության և նպատակների իրականացմանը՝ պահպանելով էթիկայի նորմերը,
- ՄԿԾ-ների համապատասխանություն ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի պահանջներին, հաստատության առաքելությանը, ինչը նպաստում է ուսանողների և դասավանդողների շարժունությանը և միջազգայնացմանը,
- համալսարանի ապահովվածություն անհրաժեշտ մասնագիտական որակավորումներ ունեցող արհեստավարժ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով,
- ֆինանսական աջակցություն հետազոտական գործունեության իրականացման և վերջինիս ուսումնառության հետ կապի ապահովմանը,
- ուսանողների կրթական և գիտահետազոտական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսների, գիտելիքների, կարողությունների, հմտությունների համապատասխանություն ՄԿԾ-ների վերջնարդյունքներին, ինչի շնորհիվ ապահովվում է շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում,
- Համալսարանի միջազգայնացմանը միտված միջոցառումների ձեռնարկում, միջհամալսարանային, միջերկրյային կապերի զարգացում
- համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի առկայություն, դրա գործունեության կանոնակարգում, ինչը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

## 2.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բուհը կրթության որակի բարձրացման նպատակով առաջնորդվում է ՈԱՇ-ի դրույթներով: 2008 թվականից գործում է Կրթության որակի ապահովման կենտրոն (հետագայում՝ Կենտրոն), որը 2022 թվականին վերանվանվել է Զարգացման և կրթության որակի ապահովման կենտրոն (ԶԿՈԱԿ): Կենտրոնն իրականացնում և վերահսկում է համալսարանում կրթական գործընթացի բարելավման և որակի բարձրացման աշխատանքները: Կենտրոնի նպատակները, խնդիրները, գործունեության ոլորտները, կառուցվածքն ու կառավարումը հստակ ձևակերպված են ԶԿՈԱԿ-ի գործունեության կանոնակարգում: Իր գործունեության ընթացքում Կենտրոնը կազմակերպել է մասնագիտությունների կրթական ծրագրերի, դասընթացների մոդուլների, ուսումնական

պլանների վերամշակման աշխատանքների իրականացումը, վերապատրաստել է բուհի դասավանդող կազմի, ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում կազմակերպել և անցկացրել է հարցումներ, մշակել և ամփոփել դրանց արդյունքները, և կատարել համապատասխան փոփոխությունները:

Կենտրոնը ինքնակառավարվող մարմին է, նրա գործողությունները և որոշումները, վարչական և կառավարման մարմինների կողմից չեն ուղղորդվում և կառավարվում:

ՈԱ գործընթացներում որոշակի դերակատարություն է վերապահված ներքին և արտաքին շահակիցներին (ուսանողներ, դասավանդող կազմ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ, արտաքին գնահատողներ, ԿԳՆ և այլն): Ուսանողների ներկայացուցիչները ներգրավված են համալսարանի բոլոր խորհուրդներում և ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացների աշխատանքային խմբերի կազմում: Ուսանողները ակտիվորեն մասնակցում են համալսարանի կողմից իրականացվող հարցաշարերի մշակման և հարցումների անցկացման գործընթացներին:

Համալսարանի Գիտական խորհրդի կազմում ընդգրկված են արտաքին շահակիցներ: Բուհի ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցները ներգրավված են նաև որպես ավարտական ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նախագահներ և անդամներ:

Համալսարանի ՈՆԱՀ-ը պարբերաբար վերանայվում և կատարելագործվում է: Կենտրոնը համագործակցում է բուհի բոլոր ստորաբաժանումների (գիտական խորհուրդ, դեկանատներ, ամբիոններ, կարիերայի կենտրոն, ՈՒԳԸ, ուսանողական պառլամենտ և այլն) հետ, վերապատրաստում նրանց, տրամադրում խորհրդատվություն, վերահսկում նրանց կողմից ՈԱ գործընթացների կատարումը: Բուհի ՈԱ-ի քաղաքականությունն ու գործընթացները մշակվել են՝ հիմք ընդունելով օտարերկրյա բուհերի որակի ապահովման քաղաքականության ու գործընթացների համապատասխան փաստաթղթերը:

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԶԿՈԱԿ-ն իրականացնում և համակարգում է կրթական գործընթացի բարելավման և որակի բարձրացման աշխատանքները՝ ուսուցման արդյունավետությունը և կրթության որակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Իր գործունեության ժամանակահատվածում ԶԿՈԱԿ-ը մեծապես նպաստել է Բոլոնիայի գործընթացի ներդրմանը համալսարանում: Մասնավորապես, կատարվել են հետևյալ աշխատանքները՝

համալսարանի վարչական աշխատակազմի վերապատրաստումը, որի ընթացքում անց են կացվել հարցումներ՝ թե որքանով են պատկերացնում աշխատակիցները Բոլոնիայի գործընթացի առանձնահատկությունները, ինչպես են ծրագրում իրականացնել Բոլոնիայի պահանջները, ինչպիսի խնդիրներ են տեսնում իրենց գործունեության մեջ: Դրանց հիման վրա ձևավորվել են Կենտրոնի գործունեության հետևյալ ուղղությունները.

- վերապատրաստել բուհի պրոֆեսորադասախոսական կազմն՝ ըստ Բոլոնիայի պահանջների,
- համապատասխանեցնել ՄԿԾ-ները և առարկայական նկարագրերը՝ միջազգային չափանիշներին,
- մանկավարժներին զինել ժամանակակից դասավանդման մեթոդներով և տեխնոլոգիաներով,
- հստակեցնել և կոնկրետացնել ուսուցման նպատակները՝ դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելու համար,

- բարձրացնել լսարանային ժամերի արդյունավետությունը՝ այն օգտագործելով ի շահ ուսանողի:

Վերապատրաստումների ընթացքում բուհի աշխատակիցները և դասավանդող կազմը.

- ծանոթացել են Բոլոնիայի գործընթացի պահանջներին,
- ստացել են բոլոր միջազգային և հանրապետական որակի չափորոշիչներ պարունակող փաստաթղթերը,
- ներգրավվել են ինտերակտիվ թրենինգներին, որոնց միջոցով իրականացվել է աշխատանքների առաջին փուլը:

Հաջորդ փուլում սկսվել են կրեդիտային համակարգի մշակման և ներդրման աշխատանքները, որի համար ևս իրականացվել են վերապատրաստումներ և ձեռնարկվել նոր, կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան ուսումնական պլանների ստեղծումը: Վերանայվել են բուհում գործող առարկայական ծրագրերը, ինչի համար ստեղծվելև բոլոր ամբիոններին է տրամադրվել միջազգային չափանիշներին համապատասխանող, արդյունավետ առարկայան ծրագրերի մշակման ձևաչափ: Արդյունքում՝ բուհում դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերը համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Համալսարանում մշտապես իրականացվում է ուսումնական պլանների, ՄԿԾ-ների, դասընթացների/մոդուլների նկարագրերի, կրթական չափորոշիչների պարբերական վերանայում և կատարելագործում՝ դրանք միջազգային չափանիշներին և տեղի կրթական խնդիրներին շարունակաբար համապատասխանեցնելու նպատակով:

Համալսարանում ուսուցման որակի բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են մանկավարժական գործընթացի դիտարկում և դասալսումներ, արդյունքների քննարկում ամբիոնների, դեկանատների, ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, Կենտրոնի հետ:

Կրթության որակի ուսումնասիրության նպատակով անց են կացվում հարցումներ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների շրջանում՝ վերհանվում են շահակիցների կարիքները և ցանկությունները, որոնց վերլուծության հիման վրա հստակեցվում են համալսարանի արդի խնդիրները և պլանավորվում՝ կատարվելիք աշխատանքները:

Ուսուցման որակի բարձրացման նպատակով ևս իրականացվել են բուհի դասախոսների վերապատրաստումներ: Դասավանդողները ծանոթացել են ուսուցման ժամանակակից պահանջներին, նոր մեթոդներին և տեխնոլոգիաներին: Կենտրոնն առաջարկել է ուսուցման ավանդական թելադրություն-դասախոսություն ձևը փոխարինել իր կողմից մշակված մի շարք նոր մեթոդներով, որոնց մեծ մասն այժմ հաջողությամբ կիրառվում է:

Ուսուցման նոր ձևերին և տեխնոլոգիաներին ծանոթանալու, դրանք համալսարանում ներդնելու նպատակով բուհի մի խումբ աշխատակիցներ 2009 թվականից ընդգրկվել են “Institution Building and Human Resource Develeopment for eLearning in the Caucasus” ծրագրում, որն կազմակերպել էր ավստրիական Global Campus կազմակերպությունը՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության նախարարության աջակցությամբ:

2011 թվականից Կենտրոնն ուսումնասիրում է ուսումնառության արդյունքների գնահատման եվրոպական չափանիշները և զարգացնում գնահատման իր համակարգը, որը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են, օրինակ՝ ուսանողի ակտիվությունը դասապրոցեսում, նրա ինքնուրույն, ստեղծագործական և արտալսարանային աշխատանքը, հաճախումները և այլն: Օբյեկտիվ գնահատման համակարգի ներդրման նպատակով իրականացվել են բուհի վարչակազմի և դասխոսների վերապատրաստումներ, ներկայացվել է ուսուցման արդյունքների գնահատման նոր համակարգը, տրամադրվել են բոլոր անհրաժեշտ փատաթղթերը (թափանցիկ և օբյեկտիվ գնահատման սանդղակ և գնահատման եվրոպական չափորոշիչներ՝ ուսանողների

համար, ուսուցման արդյունքների ստուգման ձևերի ցանկ՝ ամբիոնների համար, տեղեկագրերի և ամփոփիչ գնահատականների սանդղակներ ու ներքին շրջանառության այլ փաստաթղթեր), կատարվել է բացատրական աշխատանք՝ գնահատման նոր համակարգի ներդրման արդյունավետության և անհրաժեշտության ուղղությամբ: Գնահատման համակարգի արդյունավետության ուսումնասիրությունների արդյունքում այն պարբերաբար վերանայվում է:

## 2.6. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մշակութային փոփոխությունների որակի բարձր սանդղակ ունենալու համար հարկավոր է բավականին ժամանակ: Հստակ միտում է նկատվել, որ մի կողմից՝ մասնավոր բուհերը, չդիմանալով մրցակցությանը, փակվում են, իսկ մյուս կողմից՝ այն բուհերը, որոնք ունեն զարգացման խնդիր, տեսնելով «Հայբուսակ» համալսարանի մեջ մեծ ներուժ, միավորվել են:

ԶԿՈԱԿ-ի հիմնական նպատակն է շարունակաբար ապահովել ԵՀՀ-ում կրթության որակը, ինչպես նաև մշակել, ներդնել, իրականացնել և մշտապես բարելավել ԵՀՀ-ում կրթության որակի ապահովման մեխանիզմներ: Որակի զարգացող մշակույթը ստեղծում է շարունակական բարելավման կենսափուլ և նպաստում համալսարանի հաշվետվողականությանը:

*Գծապատկեր 2. Որակի ապահովման կենսափուլը*




## 2.7. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնելու կարևորագույն պայմանն է բուհի կողմից ինքնավերլուծության իրականացումը: Ինքնավերլուծությունը ենթադրում է 12 հիմնական ուղղություններ՝ 1) ռազմավարական կառավարում, 2) ռեսուրսներ, 3) որակի մշակույթ, 4) ակադեմիական էթիկա, 5) միջազգայնացում, 6) դասավանդող կազմ, 7) մասնագիտության կրթական ծրագիր, 8. ուսումնառություն և դասավանդում, 9) ուսանողների գնահատում, 10) ուսումնաօժանդակ համակարգ, 11) հետազոտություն, զարգացում և/կամ այլ ստեղծագործական գործունեություն, 12) հասարակությանը մատուցվող ծառայություններ:

Այս ուղղությունների ուսումնասիրությունը և առկա վիճակի գնահատումը թույլ է տալիս վեր հանել ձեռքբերումները, հնարավորություններն ու վտանգները և մշակել որակի բարելավման գործողություններ և համապատասխանեցնել բուհի գործունեությունը եվրոպական բարձրագույն կրթական տարածքի պահանջներին՝ վերանայելով կրթական ծրագրերը, ուսումնառության և դասավանդման մոտեցումները, զարգացնելով նյութատեխնիկական բազան, վերապատրաստելով դասավանդող և ուսումնաօժանդակ կազմը, ընդլայնելով գիտահետազոտական գործունեությունը ու համագործակցելով ներքին ու արտաքին շահակիցների հետ:

# 3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ,ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

## 3.1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Համալսարանի ՄԿԾ-ներն ու դասընթացների մոդուլները փոխկապակցված ծրագրային փաթեթներ են, որոնց իրականացման արդյունքում՝ բուհը պատրաստում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողունակությունների տիրապետող բարձրագույն կրթությամբ մասնագետներ: ՄԿԾ-ներն ու դասընթացների մոդուլները ստեղծվում են՝ ելնելով հետևյալ սկզբունքներից՝

- տրամաբանական միասնություն, հակասությունների բացակայություն,
- պարզություն, հստակություն,
- իրագործելիություն,
- ամբողջականություն:

**ՄԿԾ-ները պետք է.**

1. լինեն ՈԵՇ-ին և ՈԱՇ-ին, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին և բուհի առաքելությանը համահունչ,

2. ապահովել սահմանված վերջնարդյունքների (գիտելիքների, կարողությունների և հմտությունների) ձեռքբերումը, բոլոր դասընթացներիմոդուլների ուսումնական վերջնարդյունքները,

3. ներկայացնեն դասավանդման ուսումնառության և գնահատման ձևերը (լսարանային,արտալսարանային, պրակտիկաներ, հետազոտական և այլ),

4. պարունակեն իրագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, ռեսուրսները, տեղեկատվական աղբյուրները,

5. նախատեսեն արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման, բարելավման գործընթացներին:

**ՄԿԾ-ն պետք է պարունակի՝**

1. ծրագրի անվանումը,

2. ՈԱՇ-ի մակարդակը, շնորհվող որակավորումը (օրինակ՝ բակալավր, մագիստրոս, հետազոտող),

3. դասընթացի տևողությունը՝ տարի, կիսամյակ,

4. ԵԿՓԿ (ECTS) կրեդիտների քանակը,

5. ֆակուլտետը, որտեղ նախատեսվում է իրականացնել

6. արտոնագրի առկայությունը,

7. դիմորդի կրթական մակարդակին ներկայացվող պահանջները, ընդունելության պայմանները,

8. կրթական ծրագրի կառուցվածքն ու համառոտ նկարագիրը, նպատակներն ու խնդիրները, նախանշված վերջնարդյունքները,

9. մատուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար և այլն),

10. ուսանողների գնահատման սկզբունքները, մեթոդները, ձևերը և կարգը,

11. ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները

12. աշխատաշուկայում շրջանավարտների աշխատանքային հեռանկարները, մասնագիտական գործունեության ոլորտները,

13. շարունակական կրթական հնարավորությունները,

14. ՄԿԾ ուսումնական պլանը,

15. ՄԿԾ հիմնական դասընթացները (մոդուլները) և դրանց նպատակները,

16. ՄԿԾ հիմնական մոդուլների վերջնարդյունքների քարտեզը:

Հնարավորության դեպքում ցանկալի է, որ ՄԿԾ-ները ընդգրկեն ՄԿԾ–ի ռիսկային /SWOT վերլուծությունը:

## 3.2. ՄԿԾ-ՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերում (ՄԿԾ) ներառված առարկաների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները փաստում են այն, թե ուսանողը ինչ պետք է գիտենա և ինչ գործնական կարողությունների և հմտությունների պետք է տիրապետի կրթական ծրագրի յուրացման ավարտին:

ՈՒԱՎ-ներին ներկայացվող հիմնական պահանջը նրանց չափելի լինելն է: ՈւԱՎ-ների չափելիությունը ապահովվում է՝ գնահատման ճկուն համակարգով, գնահատման համապատասխան գործիքներով և մեթոդներով, ձևակերպման բազմաբաղադրիչ ձևաչափով (հասկանալ, տիրապետել, բացատրել, կիրառել), որոնք թույլ տան որոշել ուսումնառողի ձեռքբերումների մակարդակը:

Կրթական ծրագրի և ՈՒԱՎ-ների աշխատաշուկայի պահանջներին համապատասխանա–ցումը պահանջում է դրանց պարբերական վերանայում:

ՄԿԾ-երի վերանայումը իրականացվում է հաշվի առնելով կրթության, գիտության և տնտեսության համապատասխան ոլորտի զարգացման միտումները: ՈՒԱՎ-ների վերանայումը իրականացվում է տվյալ մասնագիտության համապատասխան ոլորտների մշտադիտարկման և նվաճումների արդյունքների ներառումով, ինչպես նաև ուսումնառության վերջնարդյունքների որակից շահակիցների բավարարվածության վերլուծության անցկացման միջոցով: Համալսարանի շահակիցների հետաքրքրությունները և կարիքները հանդիսանում են մասնագիտական կրթության ծրագրերի նպատակների և ՈՒԱՎ-ների ձևավորման և բարեփոխման հիմնական գործոններից մեկը: Հետևապես, շահակիցների կարիքների բացահայտումն անհրաժեշտ է իրականացնել անընդհատ: Համալսարանի շահակիցները պետք է ակտիվորեն համագործակցեն Համալսարանի հետ ՄԿԾ-երի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման և վերանայման գործընթացում:

**ՄԿԾ-ների վերանայման քաղաքականության նպատակն է**, ելնելով ՀՀ կրթության բարեփոխումների ռազմավարության հիմնադրույթներից, Համալսարանում ՄԿԾ-երի և դասընթացների (մոդուլների) ՈՒԱՎ-ների վերանայման միջոցով աշխատաշուկայի և սպառողների պահանջներին համապատասխան ՄԿԾ-երի ստեղծումն ու արդիականացումը:

**Սույն քաղաքականության կոնկրետ նպատակներն են՝**

- ՄԿԾ-երի ՈՒԱՎ-ների ուսումնասիրումը և վերլուծությունը,
- ՄԿԾ-երի ՈՒԱՎ-ների գնահատումը՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ու պահանջները,

- ՄԿԾ-երի ՈՒԱՎ-ների վերանայումը և արդիականացումը՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան:

Քաղաքականությունը կիրառվում է հետևյալ ոլորտում՝

- ՄԿԾ-երի վերլուծություն, մշտադիտարկում, գնահատում և վերանայում
- ՈՒԱՎ-ների վերանայում:

ՄԿԾ-երի ՈՒԱՎ-ների վերանայումը պարբերական գործընթաց է, որը ներառում է ՄԿԾ-ի վերաբերյալ որակական և քանակական տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և գնահատումը: ՄԿԾ-ի նպատակների և ՈՒԱՎ-ների վերանայման գործընթացը իրականացվում է վերընթաց սկզբունքով: ՄԿԾ-ի ՈՒԱՎ-ների գնահատման և վերանայման գործիքներից են թեստերը, հարցումները, քարտեզավորումը, բենչմարքինգը:

ՄԿԾ-երի և դասընթացների (մոդուլների) ՈՒԱՎ-ների վերանայման նպատակով համալսարանը կազմակերպում և անցկացնում է հարցումներ հիմնական շահակիցների շրջանում (ուսանող, շրջանավարտ, դասախոսական կազմ և գործատու):

Գործատուների կողմից տրվող արձագանքը թույլ է տալիս հստակ և օբյեկտիվ գնահատել ՄԿԾ-երի և ՈՒԱՎ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին:

Համալսարանի «Կրթության որակի ապահովման կենտրոնում», «Շրջանավարտների աշխատանքի տեղավորման և կարիերայի կենտրոնում», մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետներում կուտակվում է տեղեկություն շրջանավարտների, դասավանդող կազմի և գործատուների վերաբերյալ, որն առաջադրում է փոփոխություններ մասնագետների պատրաստման գործընթացում:

## Քաղաքականության իրականացում

ՄԿԾ-երի և դրանց մեջ ներառված դասընթացների (մոդուլների) ՈՒԱՎ-ների վերանայումը պետք է երաշխավորի ՄԿԾ-երի բարելավումը, դրանց նպատակների և վերջնարդյունքների համապատասխանեցումը ՀՀ կրթության բարեփոխումների ռազմավարությանը, Հայբուսակ համալսարանի ռազմավարությանը, և հատկապես, շահակիցների սպասելիքներին և աշխատաշուկայի պահանջներին:

ՄԿԾ-երի և դրանց մոդուլների ՈՒԱՎ-ների վերանայման, վերամշակման, ներդրման և իրականացման համար պատասխանատու են՝

- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը,
- Ինստիտուտների տնօրենները,
- Ամբիոնների վարիչները,
- Ինստիտուտների որակի գծով համակարգողները,
- Որակի ապահովման կենտրոնի պատասխանատուները,
- Համալսարանի կողմից առաջադրված տվյալ ոլորտի համար պատասխանատու այլ ստորաբաժանումներ և աշխատանքային խմբեր:

## ՄԿԾ-երի պարբերական վերանայման (ՊՎ) ընթացակարգը

### 1.1 ՄԿԾ-երի ՊՎ նպատակն է՝

գնահատել ՄԿԾ-երի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը, ինչպես նաև մատուցման որակը՝ ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյուքներով,

ըստ անհրաժեշտության որոշում ընդունել ՄԿԾ-երի բարելավման վերաբերյալ՝ նպատակ ունենալով այն արդիականացնել և պատրաստվող մասնագետների որակը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին:

Պարբերական վերանայումը հնարավորություն է տալիս գնահատել ՄԿԾ-երի վավերականությունը ու աշխատաշուկայի պահանջներին նրանց համապատասխանությունը հաշվի առնելով՝

ՄԿԾ-ի մշակման և իրականացման ընդհանուր, ընթացիկ, ինչպես նաև կանխատեսվող փոփոխությունների ազդեցությունը,

- պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը և համապատասխանությունը
- նյութական ռեսուրսների առկայությունը և մշտական հասանելիությունը,
- համապատասխան ոլորտի առկա հետազոտության և փորձի, տեխնոլոգիական առաջընթացի, դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումները,
- արտաքին միջավայրի գործոնները՝ օրինակ, ՈԱՇ-ի փոփոխություններ,
- ուսանողների պահանջները, գործատուների սպասումները և աշխատանքի տեղավորման հնարավորությունների փոփոխությունները,
- ուսանողների առաջադիմությունը,
- ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապը:

**1.2. ՄԿԾ-երի ՊՎ նպատակներն են.**

1. վերագնահատել ծրագրի արդիականությունը և պատրաստվող մասնագետների պահանջվածությունը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացը,

2. հիմնվելով Համալսարանի կարիերայի կենտրոնի կողմից կատարված արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրությունների արդյունքների վրա ստեղծել աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող կրթական միջավայր.

գնահատել ՄԿԾ-ում սահմանված ուսումնառությունից ակնկալվող վերջնարդյունքները որքանով են դրանք բավարարում աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին,

գնահատել շահակիցների՝ գործատուների և շրջանավարտների բավարարվածությունը առկա ծրագրից, բացահայտել թերությունները և դրանք բարելավել,

3. գնահատել ծրագրի վավերականության համապատասխանությունը արտաքին միջավայրի գործոնների՝ օրենքների և իրավական-նորմատիվ փաստաթղթերի, ինչպես նաև ներքին միջավայրի՝ ներհամալսարանական փաստաթղթերի և որոշումների ոփոխությանը: Հաշվի առնելով վերոնշյալը փոփոխությունները, դրանց հետ համադրել ՄԿԾ-ների փաստացի վերջնարդյունքները,

4. գնահատել ՄԿԾ-ի իրականացման որակը և ռեսուրսային ապահովվածությունը,

5. գնահատել ընթացիկ մշտադիտարկման ընթացքում ծրագրի կառուցվածքում կատարված փոփոխությունների արդյունավետությունը,

6. հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,

7. կատարել ծրագրի քննական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ և թույլ կողմերը իրականացման ընթացքում, և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,

8. հիմնավորել ծրագրի շարունակման, դադարեցման, ընդլայնման կամ վերանայման նպատակահարմարությունը:

**1.3 ՄԿԾ ՊՎ օբյեկտներն են** `ՄԿԾ փաթեթը, ուսումնական պլանը, առարկայական ծրագրերը, դասավանդման գործընթացը, դասընթացներից ակնկալվող ուսումնառության արդյունքները, ուսանողների գնահատման մեթոդները և այլն:

**1.4 ՄԿԾ ՊՎ համար իրականացվող գնահատման ցուցիչները՝**

Կրթական ծրագրի գնահատումը իրականացվում է «Կրթության որակի ապահովման կենտրոնի» ներկայացրած գնահատման ցուցիչներին (ինդիկատորներին) համապատասխան՝ օրինակ, վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի պահանջներին, դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությունը ուսումնառության արդյունքներին, առարկայական ծրագրերի համապատասխանությունը ուսումնական պլաններին, ՄԿԾ-երի բովանդակային համապատասխանությունը այլ ճանաչված ՄԿԾ-երի, ուսումը շարունակողների տոկոսը, աշխատանքի տեղավորվողների տոկոսը, գործատուների արձագանք (հարցում) և այլն :

**1.5 ՄԿԾ պարբերական վերանայման նպատակով իրականացվող գնահատման մեթոդներ՝**

ՄԿԾ-ի բաղադրիչները գնահատվում են քանակական և որակական հետազոտության մեթոդներով, ակնկալիքների և ստացված արդյունքների համեմատական վերլուծությամբ, իրականացնելով բենչմարքինգ նմանատիպ տեղական կամ այլ երկրների ՄԿԾ-ների հետ: Պարբերական վերանայման համար կարող են նաև հիմք ծառայել տվյալ ՄԿԾ-ի նախկինում կատարված գնահատումները:

**2. Ծրագրի ամբողջական գնահատումը և իրականացումը**

Ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը համահամալսարանական գործընթաց է, որտեղ կարող են ներգրավվել նաև արտաքին փորձագետներ: Ծրագրի վերանայման պարբերությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլով, ինչպես նաև տվյալ մասնագիտական ոլորտի զարգացումներով և այլն:

Համալսարանում վերանայման գործընթացը պլանավորվում և իրականացվում է ուսումնական գծով պրոռեկտորի և մասնագիտական ամբիոնների, «Կրթության որակի ապահովման կենտրոնի» տնօրենի, ՄԿԾ-երի գծով տնօրենի տեղակալի կողմից:

**3. Իրավասություններ և պատասխանատվություն**

Յուրաքանչյուր ՄԿԾ-ի վերանայման համար իրավասու են ֆակուլտետային որակի ապահովման պատասխանատուները և նրանց թիմը, որը կազմված է տվյալ ՄԿԾ-ի մասնագիտական ոլորտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից, ուսանողներից և գործատուներից, իսկ նրանց աջակցում են ուսումնական գծով պրոռեկտորը, կրթության որակի ապահովման բաժնի պատասխանատուները:

# 4. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

## 4.1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով՝ ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման ընթացակարգերի և գործառույթների ամբողջությունն է, որտեղ շրջանավարտին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո: Կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն հրապարակվում են նախապես և հասանելի են ուսանողներին ու դասախոսներին:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում սկսվել է 2010-2011 ուստարվանից՝ նախ բակալավրի առկա կրթական ծրագրերում, ապա՝մագիստրոսի առկա, 2013-2014 ուստարվանից՝ անընդհատ և ինտեգրված , 2014-2015 ուստարվանից բակալավրի հեռակա կրթական ծրագրերում:

## 4.2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթներն են՝

-կրեդիտների փոխանցում՝ ուսումնական ծրագրի բոլոր տարրերի աշխատածավալների արտահայտում կրեդիտներով և կրեդիտների փոխանցման հնարավորության ապահովում,

-կրեդիտների կուտակում՝ ուսանողի կողմից դասընթացների, դրանց յուրացման կիսամյակների և դասախոսի ընտրություն, ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն, կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն:

Նշված գործառույթներից յուրաքանչյուրի իրականացումը ենթադրում է որոշակի պայմանների, պահանջների, գործընթացների ապահովում:

Կրեդիտների փոխանցման գործառույթի համար սահմանված են հետևյալ պահանջները.

-ՄԿԾ-ների արտահայտում մոդուլներով, դրանց բոլոր տարրերի (դասընթացների նկարագրեր, կրթական մոդուլներ, կուրսային աշխատանքներ, գործնական ու լաբորատոր պարապմունքներ, պրակտիկաներ, թեզեր և այլն) աշխատածավալների արտահայտում ուսանողի ուսումնական ողջ բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան, ինչը նպաստում է ուսումնառողների շարժունությանը և շարունակական կրթություն ստանալու իրավունքի իրացմանը:

Կրեդիտների կուտակման գործառույթը ենթադրում է հետևյալ պայմանների առկայությունը.

- ուսումնական ծրագիրը բաղկացած է պարտադիր և կամընտրական դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով (նախապայմանները շարադրված են դասընթացների նկարագրերում),

- դասընթացի՝ մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում, ուսանողի կողմից ընտրության հնարավորություն՝ կախված ժամանակացույցից և/կամ դասախոսին տրված նախապատվությունից:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը, կրեդիտային համակարգի մշակման և ներդրման աշխատանքներն իրականացնելիս, ձեռնարկել է ուսումնական պլանների, մասնագիտությունների կրթական ծրագրերի և դասընթացների նկարագրերի/մոդուլների վերանայման համապատասխան կանոնակարգերի, ընթացակարգերի կազմման ու ներդրման աշխատանքներ, դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի վերապատրաստումներ:

## 4.3. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Կրեդիտները մեկ բուհից մյուսը փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջափուլերի տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի դիմումի հիման վրա, նաև երկու բուհերի համաձայնությամբ՝ համապատասխան համաձայնագրի կնքմամբ:

Կրեդիտները փոխանցելի են ուսումնական ծրագրերի և բուհերի միջև, եթե յուրացված ուսումնական ծրագիրը, նոր ուսումնական ծրագրի հետ համեմատած, ունի՝

ա) բովանդակային նույնականություն,

բ) բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ)բովանդակային որոշ տարբերություններ, սակայն կրթական համարժեք վերջնարդյունքներ:

Այլ բուհում ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի անցկացման դեպքում՝ ուսանողի, համալսարանի և ընդունող բուհի միջև կնքվում է համաձայնագիր:

# 5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## 5.1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ[1], ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայբուսակ» համալսարանի սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման քաղաքականությունը, կառուցված է գնահատման թափանցիկության, կիրառման տեսանկյունից պարզության ու դասախոսների և ուսանողների կողմից հասկանալի լինելու, կոռուպցիոն երևույթները բացառելու սկզբունքների վրա: Այդ համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ուսանողի ուսումնառության արդյունքները համադրել նախանշված վերջնարդյունքների հետ: Համակարգը միտված է ուսանողակենտրոն կրթության ամրապնդմանը: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում բացահայտել ուսանողների կարողություններն ու հնարավորությունները, գտնել նրանց ուսումնառության թույլ կողմերը և ըստ այդմ՝ համապատասխան փոփոխություններ մտցնել ծրագրում, կամ ձեռնարկել անհատական մոտեցման ձևեր՝ կրթության որակը բարելավելու համար:

Գնահատման համակարգում կարևոր նշանակություն ունի արտաքին շահակիցների հարցումների բաղադրիչը, որը չնայած թվային արտահայտություն չի գտնում գնահատման սանդղակում, սակայն ունի մեծ օբյեկտիվ նշանակություն՝ մոդուլների կամ մասնագիտության կրթական ծրագրերի արդյունավետության որոշման հարցում:

Բուհի գնահատման համակարգը նպատակաուղղված է ուսուցման արդյունավետության բարձրացմանը և հաստատության մասին հանրային կարծիքի ձևավորմանը:

## 5.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԿԱՐԳ

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը մշակվել է ‹‹Կրթության մասին›› ՀՀ օրենքի, ‹‹Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին››, ՀՀ օրենքի, ԵՀՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի, ԵՀՀ ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման կարգերի հիման վրա:

2. Սույն կարգի նպատակն է ուսուցման բոլոր ձևերում ուսումնառության և գիտելիքի ստուգման գործընթացներում ուսանող-համալսարան հարաբերությունների կարգավորումը և ուսանողների գիտելիքի ստուգման մեխանիզմների միասնական համակարգի սահմանումը:

3. ԵՀՀ բակալավրի, մագիստրոսի, անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսանողին համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված անհրաժեշտ բաղադրիչների և դրանց քանակի կրեդիտների ձեռքբերումից հետո:

4. Ուսանողի ուսումնական լրիվ բեռնվածությունը մեկ ուսումնական տարում 60 ԵԿՓՀ (ECTS) կրեդիտ է, մեկ կիսամյակում՝30 կրեդիտ:

5. Մեկ ԵԿՓՀ (ECTS) կրեդիտը համարժեք է 30 ժամ ուսումնական լրիվ բեռնվածությանը (ներառյալ ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը):

---

[1] Համալսարանը մշակել և հրատարակել է կրթության որակի գնահատման քաղաքականություն: Այստեղ այն բերելու անհրաժեշտություն չենք տեսնում, սակայն սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման համակարգը կառուցված է՝ ելնելով կրթության որակի գնահատման քաղաքականությունից:

6. Կրթական ծրագրի բոլոր բաղադրիչների համար (դասընթաց, փորձառություն, ավարտական աշխատանք) սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Կրեդիտների սահմանման հիմքը կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի յուրացման բարդությունն է (գնահատվում է ուսանողի կողմից դրա յուրացման համար անհրաժեշտ ժամանակի տևողությամբ):

7. Ուսանողը սահմանված կրեդիտը վաստակում է կրթական ծրագրի համապատասխան բաղադրիչի վերջնարդյունքները հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմը ապահովելու դեպքում:

8. Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:

9. Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ևս երկու անգամ վերահանձնելու հնարավորություն տալով: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտք(եր) վերահանձնելու հնարավորություն(ներ) է (են) տրվում այն կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, երբ առաջացել է(են) այդ պարտք(երը):

10. Համալսարանում ուսանողի գիտելիքի **արդար, օբյեկտիվ և ողջամիտ գնահատումը՝ առանց զգացմունքների, նախապաշարմունքների կամ կողմնակալության ազդեցության,**[2] կատարվում է բազմագործոնային համակարգով:

11. Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում է հետևյալ բաղադրիչներով.

11.1 Դասընթացի լսարանային պարապմունքներին ակտիվության գնահատում համաձայն № 3 հավելվածում ներկայացված պահանջների,

11.2 դասընթացի ենթաբաժինների / ուսումնական մոդուլ/ յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում 2 անգամ՝ եզրափակիչ գնահատման դասընթացի համար /ուսումնական կիսամյակի սկսվելուց 6 շաբաթ անց 1-ին և ևս 6 շաբաթ անց 2-րդ միջանկյալ ստուգում՝ համաձայն № 2 հավելվածում ներկայացված պահանջների,

11.3 գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության գնահատում (Ա վերջնարդյունք),

11.4 ինքնուրույն կատարվող աշխատանքների գնահատում (Բ և Գ վերջնարդյունքներ)

12. Գնահատումը կատարվում է 100 միավորային համակարգով, համաձայն № 1 հավելվածում ներկայացված պահանջների:

13. Ուսումնական կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որը ներառում է ուսումնառությունը և գիտելիքի ստուգումն ու գնահատումը:

14. Միևնույն խմբում նույն օրը երկու տարբեր դասընթացներից գիտելիքի քննական ստուգում չի թույլատրվում:

---

[2] Գործոնները, որոնք չպետք է ազդեն որոշումների կայացման վրա, ներառում են ուսանողի վարքագիծը (դրական կամ բացասական), բնավորությունը կամ անհատականությունը, արտաքին տեսքը, իր ընկերների կամ հարազատների առաջադիմությունը, ծնողների կարծիքը և այլն: (Տե՛ս https://www.jcq.org.uk/maintaining-objectivity)

15. Քննաշրջանի արդյունքներով ձևավորվում է ուսանողի գիտելիքի վերջնական հաշվարկային գնահատումը համաձայն № 4 հավելվածում ներկայացված պահանջների:

16. Դրական շեմը չհաղթահարած ուսանողների համար կազմակերպվում է երկու վերահանձնում:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն.

1) մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների, ավարտական աշխատանքի թեմայի ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

2) տեղեկացված լինելու գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման սկզբունքներին, կանոններին և կառուցակարգերին,

3) մասնակցելու համալսարանի կառավարմանը ներառյալ 7-րդ կետը օրենքով կամ համալսարանի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

4) մասնակցելու կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի որակի և գիտամանկավարժական կազմի գնահատմանը՝ համալսարանում գործող կարգին համապատասխան,

5) անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

6) մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,

7) բողոքարկելու ուսումնական գործընթացին վերաբերող համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները,

8) համալսարանի սահմանած կարգով ստանալու նշանակված կրթաթոշակ (ներառյալ անվանական), դրոշմաշնորհ և այլ խրախուսում,

9) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերին,

10) ընդհատելու ուսումը և զորակոչվելու բանակ, իսկ զորացրվելուց հետո, ձմեռային զորակոչի դեպքում երկու ամսվա ընթացքում և ամառային զորակոչի դեպքում երեք ամսվա ընթացքում ներկայացնելու դիմում՝ ուսանողական իրավունքները վերականգնելու համար,

11) ԵՀՀ գործող կարգերին համաձայն տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,

12) ԵՀՀ սահմանված կարգին համապատասխան՝ համալսարանի ներսում տեղափոխվելու սովորելու մեկ այլ կրթական ծրագրով՝ պահպանելով նախորդ կրթական ծրագրում կուտակած կրեդիտները,

13) ԵՀՀ կարգերի և միջազգային շարժունակության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ ուսումնառելու համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում,

14) Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալ բարոյական և/(կամ) նյութական խրախուսանք ԵՀՀ սահմանված կարգով,

15) Վերականգնելու 2-ից 7-րդ կիսամյակներում ուսումնառության դադարեցման հետևանքով կորցրած ուսանողական իրավունքները,

16) Հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան(դրանից մեկը՝ հեռակա),

17) Ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ ուսանողական կյանքին առնչվող խնդիրներով,

18) Ստանալու ուսման վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցում՝

ա) ուսանողի ուսման վարձը, ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է,

բ) առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ԵՀՀ ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստ տրվում է նախորդ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ մրցույթային հիմունքներով,

18. Համալսարանի ուսանողները պարտավոր են.

1) համալսարանի հետ կնքելու ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,

2) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

3) տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին,

4) կատարել համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունները,

5) պահպանել համալսարանի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

6) հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փարձառությանը,

7) կատարել կրթական ծրագրում և դրա առանձին բաղադրիչների ծրագրերում ուսումնառությանը ներկայացվող պահանջները,

8) կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները կատարելիս՝ պահպանել համալսարանում գործող կարգերում հետազոտական էթիկային և ակադեմիական ազնվությանը ներկայացվող պահանջները,

9) խնամքով վերաբերվել համալսարանի գույքին,

10) պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերի պահանջները,

11) ինքնուրույն ծանոթանալ ուսումնառության հետ կապված բոլոր փաստաթղթերին (քննագրաֆիկներ, ժամանակացույցեր, տարբեր փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, փոխատեղման հրամաններ և այլն) բուհի տեղեկատվության տարածման համապատասխան միջոցներից (ԵՀՀ կայքէջ, ֆակուլտետի հայտարարությունների ցուցափեղկ),

12) ժամանակին վճարել սահմանված ուսման վարձը՝

ա) ուսանողը ուսման վարձը վճարում է կամ ամբողջությամբ կիսամյակի սկզբում կամ ամսական վճարմամբ (ուսանողի դիմումի հիման վրա),

բ) ամսական սկզբունքով ուսման վարձը վճարվում է յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվա 05-ը (հինգը)՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին՝ բացառելով ամենամյա արձակուրդի ամիսները,

գ) ուսանողը կիսամյակի ուսման վարձը պարտավոր է մարել նախքան քննաշրջանի սկիզբը,

դ) չորրորդ կուրսի ուսանողական ուսման վարձը կարող են վճարել ամսական սկզբունքով, սակայն ոչ ուշ, քան փորձաշրջանի պաշտպանության օրը,

ե) առաջին կուրսի ուսանողները առաջին կիսամյակի կամ ուսումնական տարվա առնվազն առաջին ամսվա ուսման վարձը վճարում են մինչև սեպտեմբերի 15-ը,

զ) բացառիկ դեպքերում ռեկտորատը կարող է քննարկել և երկարաձգել կիսամյակի ուսման վարձը կամ դրա առնվազն առաջին ամսվա գումարը գանձելու ժամկետը,

է) կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը չվճարած ուսանողը զրկվում է քննաշրջանին մասնակցելու հնարավորությունից,

ը) ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ամբողջ ժամանակահատվածի համար՝ չընդհատված ուսումնառության դեպքում,

թ) կիսամյակում վճարված ուսման վարձը չի վերադարձվում: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսումնառության չանցած ժամկետին,

ժ) եթե վճարովի հիմունքներով սովորողը հեռացվել է ուսման վարձը չվճարելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ մինչև հրամանագրվելը պետք է վճարի տվյալ տարում գործող ուսման վարձը՝ կիսամյակի կտրվածքով, սառարկայական պարտքերի պատճառով հեռացված ուսանողը վերականգնման ժամանակ վճարում է ինչպես տվյալ տարում գործող ուսման վարձը, այնպես էլ համապատասխան տույժ, որը սահմանվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում,

ժա) վճարովի համակարգի ուսանողի ուսման ավել վճարված վարձը, իբրև կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կիսամյակի (և/կամ հաջորդ կուրսի) ուսման վարձ, իսկ ավարտական կուրսում՝ վերադարձվում է ուսանողին,

ժբ) վճարովի համակարգի ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո դրա մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատին՝ ներկայացնելով վճարումը հավաստող համապատասխան փաստաթուղթ,

ժգ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր մասնագիտությամբ վերականգնվող ուսանողի ուսման վարձի չափը չի փոխվում (մնում է զորակոչվելու պահին գործող վարձաչափը),

ժդ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր կամքից անկախ տվյալ մասնագիտությունը չլինելու պատճառով այլ մասնագիտությամբ վերականգնվող ուսանողի ուսման վարձը սահմանվում է զորակոչման պահին տվյալ մասնագիտության համար գործող ուսման վարձի չափով: Մասնագիտության առկայության դեպքերում մասնագիտությունը փոխելու պարագայում ուսանողի ուսման վարձը սահմանվում է իր նախընտրած մասնագիտության տվյալ ուսումնական տարվա (վերականգնվող ուսումնական տարվա) ընդունելությամբ սահմանված ուսման վարձի չափով:

ժե) ուսման վարձը վճարվում է և՛ փոխանցման կարգով, և՛ առձեռն վճարելով:

## 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

19) Ուսանողների բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական աշխատանքների ակտիվ մասնակցության համար համալսարանում սահմանված են խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) պատվոգրի շնորհում,

2) միանվագ դրամական պարգևատրում,

ա) ուսանողին խրախուսանքը տրվում է ռեկտորի հրամանով, ինչի մասին տեղեկատվությունը հրապարակվում է համալսարանի տեղեկատվության տարածման միջոցով,

բ) խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

20) Ուսումնական պլանները չկատարող, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերող, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները խախտող ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր, ներառյալ հեռացում համալսարանից.

1) կարգապահական տույժը կիրառվում է ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով,

2) կարգապահական տույժը կիրառվում է կարգապական խախտումները հայտնաբերելու պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում կարգապահական նոր տույժի չի ենթարկվում, ապա համարում է կարգապահական տույժը մարված:

21. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն

2) խիստ նկատողություն,

3) համալսարանից հեռացում,

22. Համալսարանի գույքին պատճառված վնասի համար ուսանողը կրում է գույքի փոխհատուցման պատասխանատվություն.

1)ուսանողներն իրավունք չունեն, առանց իրավասու անձի թույլտվության, լաբորատորիաներից և ուսումնական շենքներից դուրս հանել համալսարանին պատկանող գույքը և սարքավորումները:

23. Ուսանողը հեռացվում, ազատվում և ընդհատում է ուսուցումը բուհում, համաձայն ԵՀՀ-ում գործող կարգի:

## 4.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

24. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են հաստատված ուսումնական պլաններին և առարկայական ծրագրերին համապատասխան:

25. Դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և հրապարակվում է տվյալ կիսամյակը սկսվելուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ:

26. Համալսարանում մեկ դասի (ակադեմիական ժամի) տևողությունը 80 րոպե է: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ: Երկրորդ և երրորդ պարապմունքների միջև սահմանված է ընդմիջում՝ 20 րոպե տևողությամբ:

27. Պարապմունքի սկզբի համար սահմանված ժամից հետո ուսանողի մուտքը լսարան, մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույտվության, արգելվում է: Պարապմունքները բնականոն անցկացնելու համար բոլոր ուսումնական մասնաշենքերում պարապմունքների համար նախատեսված ժամերին արգելվում է աղմկելը:

28. Լսարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի (յուրաքանչյուր խմբում առավելագույնը 20 ուսանող):

29. Յուրաքանչյուր խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից ընտրվում է ավագ, ով իր խմբին տեղեկացնում է դեկանի հանձնարարությունների ու ցուցումների մասին:

30. Յուրաքանչյուր խմբի համար լրացվում է մատյան: Դասախոսը պարտավոր է յուրաքանչյուր պարապմունքին անձամբ գրանցումներ կատարել մատյանում:

31. Արգելվում է, առանց դասախոսի թույտվության, պարապմունքների ժամանակ էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:

## 5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

32. Համալսարանի կրթական ծրագրերը բաղկացած են պարտադիր և ընտրովի դասընթացներից:

33. Կրթական ծրագրերում ներառված դասընթացների պարտադիր կամ ընտրովի լինելը որոշվում է կրթական ծրագրով:

34. Կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված դասընթացները ենթակա չեն փոփոխման կրթական ծրագիրն ուսումնառող տվյալ կուրսի համար:

35. Բացառիկ դեպքերում, կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի ներկայացրած հիմնավորումների դեպքում կրթական ծրագրում ներառված որոշ դասընթացներ (ոչ ավելի, քան տվյալ կիսամյակում նախատեսված մեկ դասընթաց) կարող են փոխարինվել կրթական ծրագրի միևնույն վերջնարդյունքի ձևավորմանը ծառայող համարժեք դասընթացներով: Փոփոխությունները կատարվում են մինչև նախորդ ուսումնական տարվա մայիսի 1-ը ներառյալ:

36. Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված յուրաքանչյուր ընտրովի դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում:

## 6. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԱՑԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

37. Ըստ գնահատման՝ դասընթացները լինում են տարբերակված գնահատումով (որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և թվերի որոշակի միջակայքին համապատասխանող տառային նշագրումով) և ստուգարքով գնահատվող (որի դեպքում դասընթացը գնահատվում է «ստուգված/չստուգված» սկզբունքով և դրան համապատասխանող տառային նշագրումով):

38. Ուսանողի գիտելիքի գնահատումը կատարվում է ըստ սահմանված ժամանակացույցի: Ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում գիտելիքը գնահատվում է ստուգարքի, իսկ քննությամբ ավարտվող դասընթացների դեպքում՝ քննության ընթացքում:

39. Դասախոսը դասընթացն սկսելիս պարտավոր է ուսանողներին ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական ծրագիրը, գիտելիքի ստուգման հարցաշարը, թեմաների ուսումնասիրման ժամանակացույցը, գնահատման չափանիշները և գիտելիքի ստուգման և անցկացման կարգը:

40. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է գնահատման սահմանված գործոնների և դրանց միավորների հանրագումարի հիման վրա համաձայն №6, №7հավելվածների,

41. Ինչպես տարբերակված, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է տառային նիշով՝ սույն կարգի № 1 հավելվածում սահմանված սկզբունքներով:

42. Դասընթացի անհրաժեշտ կրեդիտները ստանալու համար ուսանողը գիտելիքի բազմագործոնային գնահատման համակարգի 100 միավորային սանդղակով պետք է հավաքի առնվազն 40 միավոր:

43. Ակտիվության բաղադրիչը քննությամբ ավարտվող դասընթացների համար գնահատվում է 0-ից մինչև 10 միավոր, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների համար 0-ից մինչև 40 միավոր միջակայքում:

1) Ընթացիկ ակտիվության գնահատման համար պատասխանատու է դասախոսը, ով համապատասխան գրանցումներ է կատարում մատյանում:

2) Հաշվառվում են ուսանողների հաճախումները դասախոսություններին, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներին՝ ակադեմիական խմբին դեկանատի կողմից հատկացված մատյաններում:

3) Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է տվյալ կիսամյակի ընթացքում՝ հարցումների հիման վրա. դասախոսությունների,գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների, ըստ դասախոսի հարցադրումներին ուսանողների տված պատասխանների կամ գնահատման նպատակով ակադեմիական խմբի հետ որոշված որևէ այլ եղանակի, որը նախատեսված է եղել դասընթացի ծրագրով:

4) Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է հարցումների հիման վրա համաձայն № 3 հավելվածի:

5) Դասախոսն իրավունք չունի ընթացիկ ակտիվության գնահատման համար մատյանում կատարել գրառումներ՝ առանց ուսանողի հարցման:

6) Ընթացիկ ակտիվությունը պետք է ամփոփվեն մինչև քննաշրջանի մեկնարկը:

7) Ուսանողի ակտիվությունը հաշվառելիս, հարգելի և անհարգելի բացակայությունները տարբերակվում են: Հարգելի են համարվում՝

ա. հիվանդության պատճառով մեկ և ավելի օր տևողությամբ բացակայությունները. այս դեպքում ուսանողը դիմումի հետ միասին, ֆակուլտետի դեկանին է ներկայացնում հիվանդության մասին քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից և դեկանն ընդունում է համապատասխան որոշում,

բ. Ռեկտորատի որոշմամբ՝ մեկ շաբաթ և ավելի տևողությամբ բացակայություններն այլ պատճառներով (ընտանեկան, գիտական և մարզամշակութային միջոցառումներին մասնակցության, այլ բացառիկ դեպքեր):

գ. ուսանողները ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը դեկանին ներկայացնում են բացակայելուց հետո դասի ներկայանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

44. Քննությամբ ավարտվող դասընթացի վերջնական գնահատականի ձևավորման գործոն է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:

45. Ինքնուրույն գրագողության կամ ակադեմիական բարեվարքության այլ սկզբունքների խախտման փաստի արձանագրման դեպքում աշխատանքը ենթակա է վերադարձման:

46. Քննաշրջանի ընթացքում իրականացվում են խորհրդատվություններ և գիտելիքի ամփոփիչ ստուգումներ:

47. Գիտելիքի ստուգման քննություններն իրականացվում են թեստային, համակարգչային կամ բանավոր եղանակներով:

48. Մասնագիտական դասընթացներից գիտելիքի ստուգման եղանակներն առաջարկում է ամբիոնը, որոշում է ռեկտորատը:

49. Բանավոր քննություններն անցկացվում են տվյալ ամբիոնի դասախոսներից բաղկացած հանձնաժողովներով:

50. Ամփոփիչ ստուգման ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:

51. Գիտելիքը ստուգվում, գնահատվում և արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում ստուգման օրը, իսկ համակարգչային քննությունների դեպքում՝ մինչև ստուգմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

52. Ուսանողը պարտավոր է քննության ներկայանալ ուսանողի կարգավիճակը հավաստող փաստաթղթով (ստուգման գրքույկ, ուսանողական տոմս):

53. Նույն դասընթացի շրջանակներում գիտելիքը ստուգվում է նույն հարցաշարերով:

54. Գնահատման վերաբերյալ վեճերը և քննական կարգի տեխնիկական խախտումները լուծվում են ռեկտորատի որոշումներով:

55. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու թեստային-համակարգչային քննության գնահատականը դրա անցկացումից, դրա մասին տեղեկացվելուց և արդյունքը քննարկելուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

56. Բանավոր քննության դեպքում ինչպես բողոքարկումը, այնպես էլ գնահատականի հնարավոր փոփոխությունը կատարվում են նույն օրը՝ գնահատականի հրապարակումից անմիջապես հետո առանց լսարանից դուրս գալու՝ մինչև քննության ավարտը:

57. Բողոքարկման պարագայում դասախոսը ուսանողին տրամադրում է բողոքարկման թերթիկ (լրացնելու համար) և տեղյակ է պահում այդ մասին իր ամբիոնի վարիչին և տվյալ ֆակուլտետի դեկանին: Դասախոսը պարտավոր է քննության ժամանակ ունենալ սույն կարգի հավելված № 5- ում սահմանված ձևանմուշի բողոքարկման թերթիկներ:

58. Բանավոր քննության գնահատականի վերանայման ժամանակ ուսանողը պատասխանում է նույն քննական տոմսի հարցերին՝ հանձնաժողովի ներկայությամբ, որը նախագահում է տվյալ ամբիոնի վարիչը, իսկ հանձնաժողովի անդամներ են տվյալ ֆակուլտետի դեկանը և ուսանողական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

59. Բողոքարկման արդյունքի վերաբերյալ կազմվում է արձանագրություն գնահատականը նույնը թողնելու, գնահատականը բարձրացնելու կամ գնահատականը իջեցնելու վերաբերյալ, որը ստորագրում են ուսանողը և հանձնաժողովի անդամները:

60. Թեսթային աշխատանքի բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում և դեկանին է ներկայացնում սույն կարգի № 5 հավելվածում ներկայացված ձևանմուշով բողոքարկման թերթիկը:

61. Բողոքարկման թերթիկը և թեստը դեկանը ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին: Վերջինս դա ուղարկում է համապատասխան ամբիոն քննարկման համար:

62. Բողոքարկված թեստն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.

1)վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ստեղծված հանձնաժողովի կողմից,

2)հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացում և հիմնավորում՝ ուսանողի և ամբիոնի վարիչի մասնակցությամբ (ամբիոնում):

63. Քննարկման գործընթացն ամբիոնում իրականացվում է բողոքարկման թերթիկը ստանալու պահից ՝ 2 օրվա ընթացքում:

64. Բողոքարկման արդյունքում գրանցված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:

65. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է ամփոփաթերթում՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան ուղղում դեկանի կողմից:

66. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի փորձառության բաղադրիչում:

1) Փորձառությունը կազմակերպվում է ՀՀ ձեռնարկություններում, միջազգային կազմակերպությունների ՀՀ ներկայացուցչություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

2) Յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է ղեկավար, իսկ ամբիոնի գիտամանկավարժական կազմից՝ փորձառության ղեկավար և (կամ) փորձառության ընդհանուր համակարգող:

3) Նախքան փորձառության սկիզբը յուրաքանչյուր ամբիոն, ելնելով իր մասնագիտության առանձնահատկություններից և կրթական ծրագրի բովանդակությունից, կազմում է փորձառության ծրագրեր, որոնցում ներառված առաջադրանքներով առաջնորդվում են ուսանողները:

67. Փորձառության գնահատումն իրականացվում է 100 միավորով: Փորձառության առանձին գործոններով կատարված գնահատումները ընդհանրացվում են համաձայն սույն կարգի № 4 հավելվածի:

68. Փորձառության գնահատականը գրանցվում է համաձայն սույն կարգի № 6 հավելվածի սահմանված ձևանմուշով փորձառության ամփոփաթերթում:

69. Փորձառության հաշվետվության պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնի նիստով հաստատված հանձնաժողովը:

70. Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 40-ից, սահմանված ժամկետներում ուսանողը չի ներկայացրել փորձառության համար սահմանված փաստաթղթերը, ուսանողը չի ներկայացել փորձառության պաշտպանությանը:

71. Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:

72. Փորձառությունը չպաշտպանելու դեպքում փորձառությունը գնահատվում է անբավարար:

73. Փորձառության գնահատման համար վերահանձնում չի կազմակերպվում:

74. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի (բակալավր, մագիստրատուրա) ավարտական աշխատանքի բաղադրիչում:

75. Ավարտական աշխատանքը նախապատրաստվում և հրապարակային պաշտպանության է ներկայացվում ամփոփիչ ատեստավորման նպատակով:

76. Ուսանողների ամփոփիչ ատեստավորման գործընթացը իրականացվում է ԵՀՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն:

1) Ուսանողը ավարտական աշխատանքի թեման ընտրում է ամբիոնի կողմից նախապես հաստատված (ամբիոնի կամ ուսանողի կողմից առաջադրած և ամբիոնի հետ նախապես համաձայնեցրած) և ֆակուլտետի խորհրդի կողմից վավերացված ավարտական աշխատանքների թեմաների ցանկից:

2) Ավարտական աշխատանքը նախապատրաստելու և հրապարակային պաշտպանության ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է ղեկավար:

3) Ավարտական աշխատանքը ուսանողի կողմից նախապատրաստվում է համալսարանում գործող կարգին համապատասխան:

77. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը տեղի է ունենում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում: Ամփոփիչ ատեստավորման նպատակով հանձնաժողովի կազմավորումը, դրա գործունեությունը և ուսանողների գնահատումը կարգավորվում են ԵՀՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով:

78. Ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 100 միավորով:

79. Ավարտական աշխատանքի գնահատականը գրանցվում է համաձայն սույն կարգի № 8 հավելվածի՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գրանցամատյանում:

80. Ավարտական աշխատանքը համարվում է չհանձնած, երբ ուսանողը սահմանված ժամկետում չի ներկայացրել ավարտական աշխատանք, և (կամ) սահմանված կարգին չհամապատասխանելու հիմքով ուսանողի ղեկավարը չի տվել ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության երաշխավորություն, և (կամ) ուսանողը չի ներկայացել ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությանը և /կամ ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել է անբավարար գնահատական: Ավարտական աշխատանքի պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:

81. Ավարտական աշխատանքը չպաշտպանելու դեպքում ուսանողին չի տրվում բարձրագույն կրթության կրթական ծրագիրն ավարտած լինելը հավաստող պետական նմուշի դիպլոմ և կրթական ծրագրով նախատեսված բարձրահույն կրթության որակավորում:

82. Հաջորդող ուսումնական տարիներին ուսանողը կարող է կրկին նախապատրաստել և հրապարակային պաշտպանության ներկայացնել ընտրված նոր թեմայով ավարտական աշխատանք, ինչի ժամկետները և ընթացակարգերը սահմանվում են ԵՀՀ ամփոփիչ ատեստավորման կարգով:

83. Ավարտական աշխատանքի նոր թեմա ստանալու համար ուսանողը դիմում է ներկայացնում ռեկտորի անունով ՄԿԾ-ով սահմանված ամփոփիչ ատեստավորումից առնվազն երկու կիսամյակ առաջ՝ կիսամյակը սկսելուց 15 օրվա ընթացքում:

## 7. ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

91. Վերահանձնումներին ուսանողը պարտավոր է ներկայանալ ուսանողական կարգավիճակը հավաստող փաստաթղթով (ուսանողական տոմս, ստուգման գրքույք):

92. Վերահանձնումը կազմակերպվում է ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա, այն դեպքում, երբ ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է «D» -ի քննության պարագայում կամ «U» -ի ստուգարքի պարագայում, այսինքն՝ թվային արժեքով փոքր 40-ից (առանց կլորացման):

93. Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել վերահանձնման:

94. Քննությամբ ավարտվող դասընթացների առաջին և երկրորդ վերահանձնումները գնահատվում են 0-40 միավորով, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում՝ 0-30 միավորով:

95. Վերահանձնումների ժամանակ «ընթացիկ ակտիվություն» «միջանկյալ ստուգում» գործոնների ուսանողի ստացած գնահատականները պահպանվում են և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է ամփոփիչ վերահանձնման 40 միավորից հավաքել սահմանված անցողիկ շեմի պակասող միավորը:

96. Տվյալ դասընթացից վերահանձնման մասնակցած ուսանողների համար վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է «անհատական աշխատանք» (եթե այդպիսիսն նախատեսված է դասընթացի ծրագրով), «ընթացիկ ակտիվություն» գործոններով՝ գնահատականի և վերահանձնման գնահատականի հանրագումարով:

97. Դիպլոմի հավելված փոխանցվում է վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:

98. Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո, նախքան վերահանձնումը, դեկանատը ձևավորվում է վերահանձնման թույլատրված ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

99. Վերահանձնմանը մասնակցող ուսանողը, հաստատված ժամանակացույցին համապատասխան, կարող է երկրորդ անգամ վերահանձնել տվյալ դասընթացը, եթե առաջին անգամ չի հաղթահարել դրական գնահատականի շեմը: Այս դեպքում առաջին վերահանձնման արդյունքը չի գումարվում հաշվարկված գնահատականին:

100. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների առարկայական պարտքերի վերահանձնումը կազմակերպվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբից 4-6-րդ շաբաթների ընթացքում:

101. Վերահանձնում ունեցող ուսանողները, անկախ ՄՈԳ-ից, չեն կարող օգտվել ուսումնառության անվճար համակարգի մրցույթին մասնակցելու իրավունքից, ինչպես նաև բուհի կողմից տրամադրվող ուսման վարձի զեղչերից:

102. Արգելվում է վերահանձնել ողջ ուսումնառության ընթացքում ստացած դրական գնահատականը:

## 8. ԴԱՍԸՆԹԱՑԻ (ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ) ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

103. Քննաշրջանից հետո (նախքան վերահանձնումները) յուրաքանչյուր ուսանողի համար դեկանատում հաշվարկվում է տվյալ դասընթացի վերջնական գնահատականը՝ գործոնների գնահատականների պարզ գումարով:

104. Ինչպես տարբերակված, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար, հաշվարկային գնահատականը նույնացվում է գնահատականի տառային նիշով՝ կիրառելով համապատասխան աղյուսակները (հավելված № 6):

105. Տարբերակված գնահատականներով գնահատվող դասընթացների համար վերջնական հաշվարկային գնահատականի նիշերն են `A, B+, B, C+, C, D, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների համար՝ S, U(հավելված № 1):

## 9. ԿՐԵԴԻՏ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՅՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

106. Ուսանողը չի ստանում կրթական ծրագրի որևէ բաղադրիչի համար նախատեսված կրեդիտը, եթե.

1)երկու վերահանձնումների արդյունքներով չի հաղթահարել որևէ դասընթացի դրական գնահատականի համար սույն կարգով սահմանված շեմը,

2)սահմանված կարգով չի հանձնել փորձառությունը:

107. Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե մեկ և ավելի առարկաներից ուսանողի ակադեմիական պարտքը գերազանցում է 12 կրեդիտը կամ

առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտք ունեցող ուսանողը երկու վերահանձնումներից հետո չի հաղթահարել դասընթացի դրական անցողիկ շեմը:

108. Փորձառությունից կրեդիտ չստանալու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

## 10. ԴԵԿԱՆԱՏ-ԱՄԲԻՈՆ-ՈՒՍԱՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

109. Դեկանատը՝

1) իրականացնում է ուսանողների հաճախումների ընթացիկ հաշվառման վերահսկողությունը,

2) ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում քննաշրջանի ժամանակացույցը,

3) հրապարակում և ռեկտորատ է ներկայացնում այն ուսանողների ցանկը, որոնք ստացել են «D» կամ «U» գնահատական և թույլատրվել են վերահանձնումների,

4) հաստատված կանոնակարգով համապատասխան կրեդիտներ չվաստակած ուսանողներին ներկայացնում է հեռացման՝ նախապես հրապարակելով նրանց անունները,

5) կազմակերպում է ընտրովի դասընթացների և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության գործընթացը:

110. Ամբիոնը՝

1) կազմում և ուսանողին է ներկայացնում ուսումնառության անհատական ծրագիրը,

2) կազմում է կրեդիտային հենքով ուսումնական պլաններ՝ համաձայն հաստատված նորմատիվների,

3) անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար նախապատրաստում է անհատական կամ թիմային աշխատանքների թեմատիկա,

4) կազմում է ընտրովի դասընթացների համառոտագրերը և համապատասխան ժամկետներում դրանք ներկայացնում ուսանողներին,

5) ուսումնական պլաններում պարբերաբար թարմացնում է ընտրովի դասընթացների ցանկը,

6) կազմակերպում է ուսանողների արտալսարանային աշխատանքը՝ սահմանելով դասախոսների հերթապահություն,

7)ուսանողին տրամադրում է համապատասխան մեթոդական նյութեր, գրականության ցանկ՝ դասընթացը յուրացնելու համար,

8) կազմակերպում է անհատական խորհրդատվություններ:

111. Ուսանողը՝

1) առաջին կուրսում, ուսումնառության սկզբում ծանոթանում է իրեն տրամադրված փաստաթղթերի փաթեթին և ստորագրում,

2) փորձառության ավարտից հետո ամբիոն է ներկայացնում փորձառության համար նախատեսված համապատասխան փաստաթղթերը,

3) իրավունք ունի ստանալու տեղեկատվություն վերջնական հաշվարկային գնահատականի վերաբերյալ,

4) իրավունք ունի ստանալու տեղեկատվություն վերահանձնման թույլատրված ուսանողների վերաբերյալ,

5) հարգելի պատճառով ստուգմանը չներկայանալու դեպքում լրացուցիչ ստուգմանը մասնակցելու նպատակով ներկայացնում է բացակայության համապատասխան հիմնավորում:

## 11. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

112. Ակադեմիական տեղեկագիրը պարունակում է միջազգայնորեն ընդունված հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝ գումարային կրեդիտներ, գնահատված գրեդիտներ, վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատական (ՄՈԳ)F F:

1)Գումարայյին կրեդիտը բոլոր դասընթացների և ուսումնական մոդուլների կրեդիտների գումարն է: Գումարային կրեդիտը ներառում է տվյալ կրթական ծրագրի համար նախատեսված բոլոր այն ուսումնական մոդուլները, որոնք գնահատված են A-ից մինչև C կամ S: Գումարային կրեդիտները հաշվելիս բացառվում են այն դասընթացները կամ մոդուլները, որոնցից ուսանողը գնահատվել է անբավարար (D կամ U):

2)Գնահատված կրեդիտը (պարզ գումարով արտահայտված) տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտներն են, որոնք գնահատվում են տարբերակված գնահատականներով (գնահատվում են միայն A, B+, B, կամ C+, C,) այսինքն՝ այս ցուցանիշը պարունակում է գումարային կրեդիտների մի մասը:

3)Ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները նույնացվում են համարժեք թվային միավորներով՝ գնահատականների աղյուսակի հիման վրա (հավելված № 6): Դասընթացի (կամ կրթական մոդուլի) վարկանիշային միավորը որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով (օրինակ՝ եթե 4 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է B (77), ապա տվյալ դասընթացի ՎՄ-ը հավասար է 4 կրեդիտ X 77, այսինքն՝ 308 վարկանիշային միավոր 400 հնարավորից): Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{Վարկանիշային միավորը} = \sum_{i=1}^{k} (C_i \times X_i)$$

որտեղ՝

$X_i$ –ն i ուսումնական մոդուլի գնահատականի թվային արժեքն է,

$C_i$-ն՝ i ուսումնական մոդուլի կրեդիտը,

k-ն՝ ուսումնական մոդուլների քանակը:

4) Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ընդհանրացված ցուցանիշ է որը ներկայացնում է ուսանողի ընդհանուր առաջադիմությունը: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս ըստ առաջադիմության տարբելակելու նույն քանակի կրեդիտներ վաստակած ուսանողներին:

5) ՄՈԳ-ը արտացոլում է տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտները, որոնք ավարտվում են քննությամբ և գնահատվում են A, B կամ C տառային գնահատականներով:

113. ՄՈԳ-ը հաշվարկվում է վարկանիշային միավորների և գնահատված կրեդիտների հարաբերությամբ.

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{Վարկանիային միավոր}}{\text{Գնահատված կրեդիտների հանրագումար}}$$

1) Հաշվարկի արդյունքները ներկայացվում են մինչև 0,01-ի –ճշտությամբ: Տարբերակվում են կիսամյակային (հաշվարկվում է առանձին կիսամյակի համար), տարեկան և ամփոփիչ

(հաշվարկվում է մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը) ՄՈԳ-եր: Փոխատեղումն իրականացվում է տվյալ ուսումնական տարվա կտրվածքով՝ տարեկան ՄՈԳ-ի հաշվարկի հիման վրա:

2) Համալսարանում ՄՈԳ-ի նվազագույն սահմանը 1,6 է, որը պահանջվում է բավարար առաջադիմություն գրանցելու համար:

## Հավելված 1. Եզրափակիչ գնահատմամբ դասընթացի գնահատման սանդղակ

| Ավանդական գնահատական | Գնահատականը 100 միավորային համակարգում | Գնահատականի տառային նիշը |
|---|---|---|
| գերազանց | 86-100 | A |
| լավ | 76-85 | B+ |
| լավ | 66-75 | B |
| բավարար | 56-65 | C+ |
| բավարար | 40-55 | C |
| անբավարար | փոքր է 40-ից (առանց կլորացման) | D |

## Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթացի գնահատման սանդղակ

| Ավանդական գնահատական | Գնահատականը 100 միավորային համակարգում | Գնահատականի տառային նիշը |
|---|---|---|
| ստուգված | 40-100 | S |
| չստուգված | փոքր է 40-ից (առանց կլորացման) | U |

## Հավելված № 2. Եզրափակիչ գնահատումով դասընթացի միջանկյալ ստուգում

| Միջանկյալ ստուգում /տոկոսային հարաբերությամբ/ | Հատկացված միավորը |
|---|---|
| **91-100** | **20** |
| **81-90** | **18** |
| **71-80** | **16** |
| **61-70** | **14** |
| **51-60** | **12** |
| **41-50** | **10** |
| **31-40** | **8** |
| **21-30** | **5** |
| **11-20** | **3** |
| **1-10** | **1** |

## Հավելված № 3

| Լսարանային պարապմունքներին ուսանողների ակտիվություն (տոկոսային հարաբերությամբ) | Հատկացված միավորը |
|---|---|
| **91-100** | **10** |
| **81-90** | **9** |
| **71-80** | **8** |
| **61-70** | **7** |
| **51-60** | **6** |
| **41-50** | **5** |
| **31-40** | **4** |
| **21-30** | **3** |
| **11-20** | **2** |
| **1-10** | **1** |

**Հավելված № 4. Եզրափակիչ գնահատմամբ դասընթացի վերջնական հաշվարկային գնահատում**

| Գնահատման բաղադրիչ | Ուսանողի ակտիվություն | միջանկյալ ստուգում 1-ին | միջանկյալ ստուգում 2-րդ | Ա վերջնարդյունք | Բ և Գ վերջնարդյունք | Ընդհանուր միավոր |
|---|---|---|---|---|---|---|
| Միավոր | 10 | 20 | 20 | 30 | 20 | 100 |

**Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթացի վերջնական հաշվարկային գնահատում**

| Գնահատման բաղադրիչ | Ուսանողի ակտիվություն | Ա վերջնարդյունք | Բ և Գ վերջնարդյունք | Ընդհանուր միավոր |
|---|---|---|---|---|
| Միավոր | 40 | 30 | 30 | 100 |

**Փորձառնության վերջնական հաշվարկային գնահատում**

| Գնահատման բաղադրիչ | Ուսանողի ակտիվություն | Ա վերջնարդյունք | Բ և Գ վերջնարդյունք | Ընդհանուր միավոր |
|---|---|---|---|---|
| Միավոր | 40 | 30 | 30 | 100 |

**Հավելված №5**

Երևանի «Հայբուսակ» համալսարան
Թեստային աշխատանքի կամ բանավոր ստուգման արդյունքի
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ֆակուլտետ-_____
Մասնագիտություն_____
Կուրս_____
Խումբ_____
Ուսանող_____
Առարկա_____
Գնահատող դասախոս_____
Գնահատական /տառերով և թվերով/_____

Բացատրությունը բողոքի վերաբերյալ_____
_____
_____

Բողոքարկման ամսաթիվ _____
Ուսանողի ստորագրություն_____
Ամսաթիվ _____

Հավելված №6

# ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Քննական տեղեկագիր 2, թիվ _____

Ուսումնական տարի _____ կուրս _____ կիսամյակ _____

Մասնագիտություն _____

Առարկա_____

Դասախոս _____

ազգանուն, անուն, հայրանուն, կոչում

| N | Ուսանողների ազգանուն, անուն, հայրանուն | Ուսանողի ակտիվության գնահատման միավորը (0-40 միավոր) | "__"_____ Եզրափակիչ ստուգում | | Անկրկին գնահատման միավոր (1+2+3) | "__"_____ I վերահանձնում (0-50 միավոր) (Ա,Բ,Գ) վերջնարդյունք (1+5) | | "__"_____ II վերահանձնում (0-50 միավոր) (Ա,Բ,Գ) վերջնարդյունք (1+6) | | Անկրկին գնահատման միավոր | Դասախոսի ստորագրություն | Ուսանողի գնահատականը՝ վերահանձնման դեպքում (7-րդ սյունակ), չվերահանձնելու դեպքում (4-րդ սյունակ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ա վերջնարդյունք (0-30 միավոր) | Բ, Գ վերջնարդյունք (0-30 միավոր) | | Գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | Գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | | | |
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | | 7 | | |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |

Տնօրեն՝ _____

Հավելված 7

# ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Քննական տեղեկագիր 1, թիվ _____

Ուսումնական տարի _____ կուրս _____ կիսամյակ _____
Մասնագիտություն _____ Առարկա_____
Դասախոս _____
ազգանուն, անուն, հայրանուն, կոչում

| N | Ուսանողների ազգանուն, անուն, հայրանուն | Ուսանողի ակտիվության գնահատման միավորը (0-10 միավոր) | "__"_____ | | "__"_____ | | Քննական տոմսի համարը | "__"_____ | | Անփոփիչ գնահատման միավոր (1+2+3+6) | "__"_____ | | "__"_____ | | Անփոփիչ գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | Ուսանողի գնահատականը՝ վերահանձնման դեպքում (10-րդ պտուկ), չվերահանձնելու դեպքում (7-րդ պտուկ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I միջանկյալ ստուգում | | II միջանկյալ ստուգում | | | Եզրափակիչ ստուգում | | | I վերահանձնում (0-40 միավոր) (Ա,Բ,Գ) վերջնարդյունք (1+2+3+8) | | II վերահանձնում (0-40 միավոր) (Ա,Բ,Գ) վերջնարդյունք (1+2+3+9) | | | | |
| | | | գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | | Ա վերջնարդյունք (0-30 միավոր) | Բ, Գ վերջնարդյունք (0-20 միավոր) | | գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | գնահատման միավոր | Դասախոսի ստորագրությունը | | | |
| | | 1 | 2 | | 3 | | 4 | 5 | 6 | 7 | 8 | | 9 | | 10 | | |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | |

Տնօրեն՝ _____

**Հավելված № 8. Ամփոփիչ ատեստավորման գնահատման սանդղակ**

| Ավանդական գնահատական | Գնահատականը 100 միավորային համակարգում | Գնահատականի տառային նիշը |
|---|---|---|
| գերազանց | 86-100 | A |
| լավ | 76-85 | B+ |
| լավ | 66-75 | B |
| բավարար | 56-65 | C+ |
| բավարար | 40-55 | C |
| անբավարար | փոքր է 40-ից /առանց կլորացման/ | D |

**Ավարտական աշխատանքների գնահատման սանդղակ**

| թիվ | Չափանիշ | Առավելագույն միավոր |
|---|---|---|
| 1 | Արդիականություն | 20 |
| 2 | Ինքնուրույնություն | 30 |
| 3 | Ձևակերպման որակ | 25 |
| 4 | ներկայացման որակ | 25 |
| Ընդամենը | | 100 |

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Զարգացման և կրթության որակի ապահովման (ՈԱ) կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) «Հայբուսակ» համալսարանի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

1.3 Կենտրոնը սույն կանոնակարգով սահմանված նպատակների և խնդիրների լուծման համար համագործակցում է Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների և արտահամալսարանական կազմակերպությունների հետ՝ սույն կանոնակարգի համաձայն:

1.4 Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է Համալսարանի միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրոթյամբ չարգելված այլ աղբյուներից:

1.5 Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծումն իրականացնում է «Հայբուսակ» համալսարանի խորհուրդը՝ Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

### 2. Կենտրոնի նպատակները

2.1 Կենտրոնի հիմնական նպատակներն են. խթանել համալսարանի ինստիտուցիոնալ զարգացման գործընթացները և ապահովել ու շարունակաբար կատարելագործել կրթական ծառայությունների որակը:

2.2 Ուղղորդել Համալսարանում ռազմավարական պլանավորման մասնակցային գործընթացը:

2.3 Մշակել, ներդնել, իրականացնել, մշտադիտարկել և շարունակաբար բարելավել Համալսարանում ՈԱ մեխանիզմները:

2.4 Մշակել և պարբերաբար վերանայել Համալսարանի ՈԱ քաղաքականությունը, ռազմավարությունը, ընթացակարգերը:

2.5 Վարչական աջակցություն տրամադրել բոլոր մակարդակներում մշակված ռազմավարության իրականացմանը:

2.6 Ապահովել որակի միասնական չափանիշների մշակման, իրականացման, ՈԱ գործընթացների ներդաշնակեցման Համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:

2.7 Ապահովել կրթության որակի ներքին ապահովման հաշվետվողականությունը:

2.8 Ապահովել կանոնակարգային և կազմակերպչական հենքի ստեղծում և վարչական օժանդակություն՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար:

2.9 Համագործակցել ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ պատասխանատուների, կրթական ու գիտական կազմակերպությունների հետ, աջակցել Համալսարանի մասնակցությանը դրամաշնորհային, փոխանակման և այլ ծրագրերին՝ ի նպաստ որակի բարելավմանը:

## 3. Կենտրոնի գործառույթները

Կենտրոնը՝

3.1 համակարգում է Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացը,

3.2 մշակում, իրականացնում, մշտադիտարկում, գնահատում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցում դրանց արդյունքների մասին, սահմանում՝ որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ՝ ընդունված եվրոպական պահանջներին համահունչ,

3.3 մշակում է «Հայբուսակ» համալսարանի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,

3.4 համակարգում, վերահսկում և աջակցում է ՈԱ գործընթացների իրականացմանը Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում,

3.5 ապահովում է ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ներքին և արտաքին շահակիցների, արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,

3.6 կազմակերպում է Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումը, իրականացումը ու վերահսկումը,

3.7 համակարգում է Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,

3.8 համագործակցում է մասնագիտական կրթության ՈԱ եվրոպական կառույցների հետ,

3.9 ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,

3.10 պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում: Մասնակցում է դասալսումներին ՝ ըստ անհրաժեշտության ։

3.11 կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան,

3.12 համակարգում է «Հայբուսակ» համալսարանի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում կրթության որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,

3.13 մշակում և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս խմբեր և այլն) և ընթացակարգերը,

3.14 համագործակցում է Համալսարանական խորհրդի և մնացյալ բոլոր սուբյեկտների հետ և աջակցում նրանց աշխատանքներին:

## 4. Կենտրոնի կառավարումը

4.1 Կենտրոնը ղեկավարում է «Հայբուսակ» համալսարանի զարգացման և կրթության որակի ապահովման գծով պրոռեկտորը: Նրա բացակայության ընթացքում նրա պարտականությունները կատարում է ռեկտորի կողմից նշանակված որևէ անձ կամ Կենտրոնի համակարգողը:

4.2 Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում «Հայբուսակ» համալսարանի ռեկտորը:

4.3 Կենտրոնի ղեկավարը պատասխանատվություն է կրում Կենտրոնի նպատակների իրականացման և Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի համար՝

4.3.1. պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, համաձայն «Հայբուսակ» համալսարանի կանոնադրության և Կենտրոնի գործունեության կանոնակարգի;

4.3.2. «Հայբուսակ» համալսարանի ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով և այլ զեկույցներով;

4.3.3. ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցությունը;

4.3.4. ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

4.3.5. Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ հրավիրում է խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ Համալսարանի ռեկտորին, պրոռեկտորներին, ներկայացնում է զեկույցներ և առաջարկություններ Կենտրոնի գործունեությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ;

4.3.6. «Հայբուսակ» համալսարանի ռեկտորին ներկայացվում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու և վերապատրաստելու վերաբերյալ;

4.3.7. ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, Կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկուցելով և համաձայնեցնելով ռեկտորի հետ:

4.4 Կենտրոնի համակարգողը կազմակերպում է Կենտրոնի միջոցառումներն ու գործավարությունը՝

4.4.1 համակարգում է «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական պլանավորման, ինստիտուցիոնալ զարգացման գնահատման և հաշվետվության աշխատանքները;

4.4.2 աջակցում է Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների, այդ թվում՝ ՈԱ գործակալությունների հետ համագործակցությանը և համակարգում ՈԱ փորձագետների կապը համալսարանի ստորաբաժանումների հետ;

4.4.3 Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է արձանագրություններ, զեկույցներ ու այլ փաստաթղթեր և կատարում Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ:

## Հավելված 2. ԵՀՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ[3]

Երևանի «Հայբուսակ» Համալսարանի (այսուհետ՝ ԵՀՀ) որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականությունը ԵՀՀ-ի առաքելության, ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակների իրականացմանն ուղղված մոտեցումների, գործողությունների և գործ-ընթացների ուղեցույց ու ընթացակարգ է, որը համահունչ է Բարձրագույն կրթության զարգացման ՀՀ քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, կրթության որակի ապահովման եվրոպական ու ազգային չափորոշիչներին ու ուղենիշներին, բուհի շահակիցների ակնկալիքներին:

ՈԱ քաղաքականության կենսագործման համար հիմք են հանդիսանում բացառապես ԵՀՀ–ի ռեսուրսներն ու կարողությունները:

ՈԱ քաղաքականության նպատակն է. ապահովել ԵՀՀ-ում մատուցվող կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավումը և զարգացնել ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները, առավելագույնի հասցնել դրանց նպատակային օգտագործումը ի շահ կրթության որակի բարձրացման:

### ԵՀՀ-ի ՈԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԵՀՀ ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու նրանց միջև պատասխանատվությունների և պարտավորությունների բաշխումը ունի հետևյալ կառուցվածքը.

**ԵՀՀ Համալսարանի խորհուրդը (ՀԽ)**.

- հաստատում է ԵՀՀ ՈԱ քաղաքականությունը և ռազմավարությունը
- քննարկում է ՈԱ գործընթացն ու արդյունքները և առաջադրում բարելավման գործողություններ:

**ԵՀՀ ռեկտորը**.

- ղեկավարում և վերահսկում է ԵՀՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակման աշխատանքները և ինքնագնահատման գործընթացը
- սահմանում է ԶԿՈԱԿ-ի հաստիքացուցակը, ապահովում ՈԱ համակարգի ներդաշնակ աշխատանքը և փոխգործակցությունը կառավարման այլ մարմինների հետ:

**Պրոռեկտորները**.

- ապահովում են բոլոր ինստիտուտների, ԶԿՈԱԿ-ի, ուսումնամեթոդական վարչության և առնչվող այլ ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը
- մասնակցում են ԵՀՀ ինքնագնահատման գործընթացին, ինքնագնահատման զեկույցի պատրաստմանը և հաջորդող գործողությունների պլանավորմանն ու վերահսկմանը:

**ՀԽ ՈԱ հանձնաժողովը**.

- Որպես վերահսկողական մարմին, գնահատում է ԿՈԱ ընթացակարգերի և չափանիշների

[3] Ընդունվել է ԵՀՀ Գիտխորհրդի 13.11.2015 նիստում, վերանայվել, քննարկվել և ընդունվել է 2022 թ. Համալսարանի խորհրդի թիվ 7 նիստում:

համապատասխանությունն ընդունված բոլոր չափորոշիչներին

- ՀԽ-ի հաստատմանն է ներկայացնում և երաշխավորում ՈԱ և գնահատման ընթացակարգերը, կրթական ծրագրերի չափորոշիչները, ՈԱ-ն առնչվող կանոնակարգային և նորմատիվային այլ փաստաթղթեր, նոր և վերանայված կրթական ծրագրերի փաթեթները,

**ԶԿՈԱԿ-ը**.

- ապահովում է ՄԿԾ-ների մշակման, իրականացման և վերանայման որակի հսկողությունը և դրանց համապատասխանությունը միջազգային կրթական չափորոշիչներին,
- պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը
- համակարգում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում կրթական ծրագրերի ՈԱ գործառույթների և ընթացակարգերի իրականացումը
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի գնահատման գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման և որակի գնահատման համար
- գնահատում է ՊԴ կազմի ուսումնամեթոդական գործունեության արդյունավետությունը, կազմակերպում և մասնակցում է դասալսումներին։

**Ինստիտուտները**.

- պատասխանատու են ինստիտուտի մակարդակով կրթության որակի վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար
- ապահովում են ինստիտուտների ՄԿԾ-ների մշակման, իրականացման, ընթացիկ մշտադիտարկման ու պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ինչպես նաև հենանիշային գնահատումը (benchmarking)
- կազմակերպում են կրթական ծրագրերի ինքնագնահատումը և համապատասխան զեկույցի կազմումը՝ ծրագրերի տարեկան մշտադիտարկման, պարբերական վերանայման և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում
- մշտադիտարկում են ինստիտուտում գիտահետազոտական գործունեության ընթացքը։

**Ինստիտուտների խորհուրդների ՈԱ պատասխանատուները**.

- վերահսկում են կրթական ծրագրերի մշակման, վերանայման և դրանց ՈԱ գործընթացների իրականացումն ու պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը
- պատասխանատու են ինստիտուտում ուսուցման վերահսկման և համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման համար։

**Ուսանողները**.

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին

- ընդգրկված են ԵՀՀ ՀԽ և ինստիտուտների խորհուրդներում և ԵՀՀ ՈԱ գործընթացներում՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն (ՈԻԳԸ) և այլն) ներկայացուցիչներ
- մասնակցում են ԵՀՀ ինքնագնահատման գործընթացներին և համապատասխան զեկույցների պատրաստմանը։

**Արտաքին փորձագետները, շրջանավարտները և գործատուները**.

- կատարում են ԵՀՀ գործունեության, ՈԱ համակարգի և ՄԿԾ-ների արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում
- ընդգրկված են ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում
- ԵՀՀ նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին
- մասնակցում են ԵՀՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության և ԵՀՀ շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին։

## Հավելված 3. ԶԿՈԱԿ-ի հարցումները

**Հարցում 1. «Հայբուսակ» համալսարան. Տարեկան հարցում**

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար։ Ձեր անկեղծ կարծիքը կնպաստի ուսուցանման որակի բարելավմանը։

1. Այս հարցումն անանուն է, միայն խնդրում ենք նշել Ձեր կարգավիճակը։

2. Նշեք Ձեր ստորաբաժանում(ներ)ը։

3. Որքա՞ն է հավանական, որ խորհուրդ կտաք «Հայբուսակ« համալսարանը Ձեր ընկերներին և ծանոթներին (Լիկերտի սանդղակ)։

4. Ինչպե՞ս եք գնահատում ուսման որակը համալսարանում (ԼՍ)։

4ա) Ինչո՞ւ ընտրեցիք այդ պատասխանը։

5. Որքանո՞վ է «Հայբուսակ» համալսարանը նպաստում Ձեր մասնագիտական աճին։

6. Շատ շնորհակալություն։ Կա՞ որևէ այլ բան, որով կցանկանայիք կիսվել։ Ցանկության դեպքում կարող եք թողնել Ձեր հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն և մենք կկապվենք Ձեզ հետ։ ԵՀՀ ԶԿՈԱԿ թիմ

**Հարցում 2. Շրջանավարտների հարցում**

Ավարտական կուրսի ուսանողների կարծիքը բուհի վերաբերյալ հարցում

Մասնագիտություն

1. Ինչպե՞ս ընտրեցիք այս բուհը։

   1) Ելնելով իմ նախասիրություններից

   2) Ծնողներիս խորհրդով

   3) Ընկերների, ծանոթների, բարեկամների խորհրդով

   4) Այլ, նշել

2. Արդյո՞ք արդարացի, բաց ու թափանցիկ էին բուհ ընդունվելու գործընթացները։

1) Այո, լիովին
2) Մասամբ
0) Ոչ

2ա) Ինչո՞ւ ընտրեցիք այդ պատասխանը:

3. Կրթական ծառայություններ

Խնդրում ենք ըստ ստորև ներկայացված սանդղակի, որտեղ 1-ը նվազագույն, իսկ 5-ը՝ առավելագույն ցուցանիշն է, գնահատել բուհի մատուցած կրթական ծառայությունների հետևյալ բաղադրիչների որակը.

Անբավարար 1 -- 2 -- 3 -- 4 -- 5 Գերազանց

3.1 Բուհի ենթակառուցվածքների և ռեսուրսների՝ ժամանակակից պահանջներին համապատասխա-նությունը

3.2 Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ու մանկավարժական կարողությունները

3.3 Բուհի վարչական անձնակազմի արհեստավարժությունը

3.4 Մասնագիտության կրթական ծրագրի բովանդակությունը

3.5 Կրթական միջավայրը /միջանձնային և միջխմբային հարաբերությունները

3.6 Գնահատման համակարգի անաչառությունը

3.7 Հետազոտական աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը՝ ՈՒԳԸ

3.8 Պրակտիկաների կազմակերպումը և օգտակարությունը

3.9 Ուսանողական պառլամենտի գործունեությունը

3.10 Ստացած կրթության որակը

4. Արդյոք Դուք համարո՞ւմ եք, որ բուհում ստացած կոմպետենցիաները Ձեզ թույլ են տալիս կատարել մասնագիտական աշխատանք: ▪ Do you think that the competences gained at YHU allow you to work in your professional field?

1) Այո, լիովին ▪ Yes, fully
2) Մասամբ ▪ Partially
0) Ոչ, անհրաժեշտ է անցնել լրացուցիչ վերապատրաստումներ

Մանրամասնեք, խնդրեմ _____

5. Ուսման ընթացքում Դուք հնարավորություն ունեցե՞լ եք ներգործելու կրթական ծրագրերի բովանդակության վրա:

1) Այո
0) Ոչ

6. Ուսման ընթացքում Դուք հնարավորություն ունեցե՞լ եք ինքնուրույն ընտրելու որևէ դասընթաց:

1) Այո
0) Ոչ
9) Անպատասխան

7. Ուսման ընթացքում առնչվե՞լ եք անարդարությունների, հովանավորչության կամ կոռուպցիոն դեպքերի ▪ Have you faced injustice, patronage or corruption cases during your studies?

0) Ոչ

1) Այո: Եթե կարող եք՝ նշեք, ինչպիսի դեպքեր են եղել

8. Ի՞նչ առաջարկություններ, ցանկություններ ունեք, որոնք կօգնեն բարելավել կրթության որակը:

9. Ձեր սեռը. ▪ Your gender: 1 Արական ▪ Male 2 Իգական ▪ Female

10. Ձեր տարիքը. ▪ Your age:

1) մինչև 22 ▪ below 22

2) 23-26

3) 27-30

4) 31 և ավելի ▪ 31 and above

**Հարցում 3. Աշխատակիցների հարցում**

Հարգելի գործընկեր

Խնդրում ենք լրացնել այս կարճ անանուն հարցումը և տարածել հղումը Ձեր աշխատակիցների շրջանում: Ձեր անկեղծ կարծիքը կօգնի բարելավել կառավարումը, աշխատանքային պայմանները և տեղեկատվության հոսքը մեր համալսարանում:

ԶԿՈԱԿ թիմ

1. Աշխատանքի տեսակը և աշխատավայրը
2. Սեռը
3. Ինչպես եք գնահատում դասախոս-ուսանող փոխհարաբերությունները համալսարանում:
4. Ինչպես եք գնահատում աշխատանքային մթնոլորտը կոլեկտիվում:
5. Ինչպե՞ս եք գնահատում հետևյալ ստորաբաժանումների աշխատանքը, առկա ռեսուրսները և ենթակառուցվածքները

5.1.-5.10. Ռեկտորատ, դեկանատներ, գիտխորհուրդ, ԶԿՈԱԿ, Միջազգային կապեր, լսարաններ, կաբինետներ/լաբորատորիաներ, գրադարան, ինտերնետ կապ, անվտանգություն

6. Ի՞նչ եք առաջարկում աշխատանքային պայմանները բարելավելու համար:
7. Ինչպե՞ս եք գնահատում տեղեկատվության հոսքը:
8. Արդյո՞ք բուհի կառավարման համակարգում հաշվի է առնվում Ձեր կարծիքը:
9. Ձեր կարծիքով արդյո՞ք բուհն ապահովում է Ձեր աշխատանքի համարժեք վարձատրություն:

**ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ No 4. «Աշխատաշուկայի կադրերից գործատուների բավարարվածության»**

| | | | |
|---|---|---|---|
| **Լրացման տարեթիվ – 201__թ.** | | | |
| **1** | **Կազմակերպության անվանումը –** | | |
| **2** | **Գործունեության ոլորտը** | ա/ արտադրություն | |
| | | բ/ ծառայություն | |
| | | գ/ առևտուր, | |
| | | դ/ կրթություն | |
| | | ե/ պաշտպանություն | |
| | | զ/ այլ | |
| **3** | | ա/ բավարար | |

| | | | |
|---|---|---|---|
| | Ինչպե՞ս կգնահատեք Ձեր կազմակերպության երիտասարդ (մինչև 35 տարեկան) աշխատակիցների տեսական մասնագիտական գիտելիքները | բ/ լավ | |
| | | գ/ գերազանց | |
| 4. | Ինչպե՞ս կգնահատեք Ձեր կազմակերպության երիտասարդ (մինչև 35 տարեկան) աշխատակիցների գործնական հմտությունների և կարողությունների մակարդակը | ա/ բավարար | |
| | | բ/ լավ | |
| | | գ/ գերազանց | |
| 5. | Արդյո՞ք նրանք կարողանում են զբաղեցնել աշխատատեղը առանց լրացուցիչ վերապատրաստում անցնելու | ա/ երբեք չեն կարողանում | |
| | | բ/ երբեմն կարողանում են | |
| | | գ/ միշտ կարողանում են | |

6.Առաջարկություններ _____

| | | | |
|---|---|---|---|
| ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ No 5<br>Կարիերայի կենտրոնի աշխատանքների գնահատման | | | |
| Ֆակուլտետ – _____<br>Կրթականծրագիր - _____Կուրս - _____ | | | |
| 1. | Բուհում գործո՞ւմ է Շրջանավարտների աշխատանքի տեղավորման և կարիերայի կենտրոն | ա/Այո, գործում է: | |
| | | բ/Ոչ, չի գործում | |
| | | գ/Տեղյակ չեմ | |
| 2. | Օգտվո՞ւմ եք կենտրոնի ծառայություններից | ա/ Այո, օգտվում եմ | |
| | | բ/ Ոչ, չեմ օգտվել | |
| | | գ/ Առիթ չեմ ունեցել | |
| 3. | Եթե դիմել եք, կենտրոնը բավարարե՞լ է Ձեր դիմումը | ա/Այո | |
| | | բ/Ոչ | |
| | | գ/ Երբեմն | |
| 4. | Հետևու՞մ եք կենտրոնի հայտարարություններին | ա/Պարբերաբարհետևումեմկենտրոնի հայտարարություններին | |
| | | բ/Հետևում եմ կենտրոնի հայտարարություններին ՖԲ սոցիալական էջում ամեն օր | |
| | | գ/Չեմ հետևում եմ կենտրոնի հայտարարություններին | |
| 5. | Ինչպե՞սկգնահատեքկենտրոնիաշխատանքը | ա/ Լավ | |
| | | բ/ Բավարար | |
| | | գ/ Վատ | |
| 6. | Եթե ցանկանում եք պարբերաբար տեղեկություն ներստանալ կենտրոնի աշխատանքներ իմասին գրանցեք Ձեր էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը, հետադարձ կապ ապահովել ու համար<br>Էլ. հասցե _____<br>Հեռախոս_____ | | |

## Հավելված 4. ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ[4]

*1. Ներածություն*

Կրթության որակի ապահովումը «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթ նպատակն է, որը նպաստում է նրա կայացմանը և մրցունակության բարձրացմանը: Այսօր այդ նպատակի ձեռքբերման համար, միջազգային մակարդակով, որպես գործուն մեխանիզմ է ծառայում բենչմարկինգը: Այն մեզանում նոր երևույթ է և կիրառության մեջ է մտել կրթական բարեփոխումների ներկա փուլում, երբ բուհերն անցնում են ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման գործընթաց: Այդ պայմաններում խիստ արդիական է կրթության որակական ցուցանիշների ապահովման, դասավանդողների ու ուսանողների միջազգային շարժունության կարողությունների ապահովման տեսլականից ելնելով՝ որոնել, գտնել նմանատիպ գիտակրթական գործունեություն ծավալող արտերկրի բուհեր և համագործակցել նրանց հետ, ուսումնասիրել նրանց փորձը և լավագույնը փոխառել, ներդնել սեփական բուհում: Այս քայլի իրականացումը թույլ կտա ոչ միայն բարելավել կրթության որակն ու արդյունավետությունը, այլև նպատակային օգտագործել առկա ռեսուրսներն ու ներուժը:

Այս փաստաթղթի կազմումն ու ընդունումը լիովին համապատասխանում է «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագրի ոգուն և հիմնվում է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող ՈԱՇ-ի սկզբունքների վրա:

*2. Բենչմարքինգի քաղաքականության էությունն ու նպատակը*

Բենչմարքինգը (benchmark- հաշվարկի սկիզբ, էտալոնային համեմատություն, չափանիշ) գործունեություն է ուղղված բիզնեսի կառավարման լավագույն օրինակների որոնմանը, գնահատմանը և յուրացմանը: Այսօր այն համարվում է կրթության ոլորտում արդյունավետ գործիք, որը կիրառվում է առաջատար դիրքի հասնելու համար: 2002թ. Որակի ապահովման եվրոպական ցանցի(ENQA) սեմինարի ընթացքում բենչմարքինգը սահմանվել է որպես ուսումնասիրության գործընթաց, որը պահանջում է վստահություն, ըմբռնողություն, կատարելագործման նպատակով լավագույն փորձի ընտրություն և ադապտացում:

Բենչմարքինգիներքոմենքհասկանումենքհամանմանգործունեությունիրականացնողմիջազգայինճանաչումգտածբուհիառաջավորփորձիհամեմատականուսումնասիրություն՝ ողջառաջավորը, արդիականը, արդյունավետըբուհումներդնելուհամար:

Մենք առաջնորդվել ենք Ռոբերտ Քեմփի (Robert Camp) կողմից մշակված բենչմարկինգի անցկացման մեթոդաբանությամբ, որը ենթադրում է այսպիսի քայլերի իրականացում.

1. բենչմարքինգի օբյեկտի ընտրություն,

[4]Հաստատվել է ԵՀՀ ռեկտորի կողմից 24.06.2015թ.:

2. բենչմարքինգի գործընթացի որոշում,
3. պոտենցիալ գործընկերների հայտնաբերում,
4. տեղեկությունների աղբյուրների որոշում,
5. տվյալների հավաքագրում և գործընկերների ընտրություն,
6. բենչմարքինգի՝ լավագույն և վատթարագույն օբյեկտների ցուցանիշների միջև տարբերությունների որոշում,
7. տարբերությունների ներդրում գործընթացի մեջ,
8. արդյունքների ապագա ներդրման նպատակի որոշում,
9. բենչմարքինգի մասնակիցների միջև շփումներ,
10. բենչմարքինգի նպատակի ճշգրտում,
11. ներդրումներ,
12. արդյունքների ամփոփում և վերստուգում:

Վերոհիշյալ մեթոդաբանությունից ելնելով՝ մենք մշակել ենք մեր կողմից իրականացվելիք գործողությունների հետևյալ շարքը.

1. բենչմարկինգի օբյեկտի ընտրություն,
2. բենչմարկինգի գործընթացի որոշում,
3. գործընկերների հայտնաբերում և փոխպայմանավորվածության ձեռքբերում,
4. տեղեկությունների աղբյուրների որոշում և տվյալների հավաքագրում,
5. բենչմարկինգի արդյունքների մասին տեղեկատվության ապահովում շահագրգիռ կողմերին, բենչմարքինգի էթիկայի նորմերի պահպանում,
6. բենչմարքինգի լավագույն և վատագույն ցուցանիշների համադրում՝ մրցունակության և արդյունավետության տեսանկյունից,
7. արդյունքների ներդրման նպատակի և նպատակահարմարության որոշում,
8. տարբերությունների ներդրում բուհում,
9. արդյունքների վերլուծություն, ամփոփում և մոնիթորինգ:

Մեր բուհի պարագայում այսօր առավել հրատապ է կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացումը, սակայն ինչպես այս, այնպես էլ բուհի գործունեության մյուս ոլորտների համար կիրառելի է նույն մոտեցումը:

Համալսարանի քաղաքականության էությունն է ձևավորել և զարգացնել որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ՝ ԵՄ երկրների համանման կրթօջախների փորձի ուսումնասիրության, համեմատության, նորի, արդիականի, առաջավորի ու արդյունավետի բացահայտման համար՝ բուհում ներդնելու, բուհի մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Այդ քաղաքականությունն ու դրա իրականացման ընթացակարգը իրենցից ներկայացնում են բուհի գործունեության որակական ցուցանիշների արմատական բարելավման կարևորագույն լծակ:

*3. Բենչմարքինգի սկզբունքները*

Համալսարանի կողմից իրականացվող բենչմարքինգի ծրագրերի իրականացման սկզբունքները բխում են «Բենչմարքինգի իրականացման ժամանակ վարքի եվրոպական կոդեքսից» : Մեր կողմից սահմանվել են հետևյալ սկզբունքները.

1. Համապատասխանություն՝ բուհի ռազմավարական ծրագրին (առաքելությանը),
2. մանրակրկիտ նախապատրաստություն,
3. շփման կուլտուրա,
4. ինֆորմացիայի փոխանակում,
5. փոխշահավետություն,
6. անալոգիա,
7. լեգալություն,
8. համադրելիություն,
9. արժանահավատություն,
10. արդյունավետություն,
11. ավարտունություն(ճշտապահություն),
12. տեղեկատվությանգաղտնիություն,
13. նպատակային կիրառություն,
14. ըմբռնողություն և համաձայնություն,
15. մրցակիցների հետ փոխհարաբերությունների կանոնակարգում,
16. վերահսկելիություն:

*Բենչմարքինգի համար համագործակցող ՄՈՒՀ-երիրընտրության չափանիշները*

Գոյություն ունեն բենչմարքինգի մի շարք տեսակներ՝ ներքին, մրցակցային, ֆունկցիոնալ ընդհանուր, գործընթացի ծախսերի բենչմարքինգ և այլն: Այս կամ այն ձևի ընտրությունը կախված է տվյալ ձեռնարկության առանձնահատկություններից և բենչմարքինգի իրականացման նպատակից:

Բենչմարքինգի գործընթացում կարևորվում են հետևյալ փուլերը.

ա/ Վերլուծության օբյեկտ ծառայող առավելության որոշում: Կարելի է կազմակերպությունն ամբողջապես կամ մասնակիորեն վերլուծության առարկա դարձնել, դիտարկել այն ներքին կամ արտաքին տեսանկյունից և այլն:

բ/Գործընկերների որոնում: Որպես այդպիսիք՝ կարող են ծառայել ոլորտի լավագույն հաստատությունները, որոնք համեմատելի են սեփական բուհի հետ: Այս փուլը ենթադրում է հետևյալ քայլերի իրականացում.

- Հպանցիկ որոնում(toskim), ուրվագծում, մատչելի աղբյուրներից տեղեկությունների հավաքում,
- Տեղեկությունների կարգավորում(totrim), համակարգում,
- Լավագույների առանձնացում(to cream), գործընկերների ընտրություն:

Լավագույն գործընկերհամարվողբուհիպետքէ համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1. Ունենա որակի ապահովման քաղաքականություն և դրա իրականացման մեխանիզմներ,

2. Լինի համադրելի ուսանողների, դասախոսների, կարողությունների, ռեսուրսների, առաքելության նպատակների առումով,

3. Հետաքրքրված լինի բենչմարքինգի իրականացման գործընթացով,

4. Ունենա բարձրագույն կրթության գործընթացների բարելավման և առաջավոր փորձի ուսումնասիրության և ներդրման փորձ և լուրջ որակական ձեռքբերումներ:

գ) Տեղեկատվության հավաքում, որակական ու քանակական տեղեկությունների ձեռքբերում, աշխատանքի բովանդակության, արդյունավետությունը ապահովող գործոնների ուսումնասիրություն: Տեղեկատվության հավաքումը ներառում է մի շարք հարցերի լուծում. Հարցաշարերի մշակում, սեփական բուհի՝ ուշեղ և թույլ կողմերի մասին տեղեկությունների ճշգրտում, գործընկեր կազմակերպության մասին և հիմնախնդրի մասին լրացուցիչ աղբյուրներից տեղեկությունների ձեռքբերում, դրանց հավաստիության ստուգում:

դ) Ունեցած տեղեկությունների վերլուծություն, տարբերությունների, ընդհանրությունների բացահայտում, ընդօրինակելու, կիրառման արժանի առավելությունների առանձնացում, պատկերի հստակեցում:

ե) Ձեռք բերված արդյունքների կենսագործման հիման վրա՝ բուհի գործունեության բարելավում, որը պետք է կատարվի ոչ թե դրանց կույր ընդօրինակման, պարզ պատճենման, այլ բուհի առանձնահատկությունները հաշվի առնելու, համալսարանում կոնկրետ տեղայնացնելու միջոցառումներ մշակելու, քայլերը պլանավորելու, հետևանքները և հետագա նորարարական հեռանկարները կանխատեսելու ճանապարհով:

զ) Գործընթացի գնահատում և վերահսկողություն: Այս հարցում անհրաժեշտ է կարևորել բուհի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով սահմանված արդյունքների ձեռքբերումը, պահանջվող ռեսուրսները, միջոցները, նախանշված ժամկետները:

*5. Բենչմարքինգի իրականացումն ու կառավարումը*

- Բենչմարքինգի իրականացումը կատարվում է համագործակցող հաստատության /հաստատությունների հետ՝ բենչմարքինգի առարկայի, փոխանակվող տեղեկատվության շրջանակի, յուրաքանչյուր հաստատության ներկայացուցիչների իրավասությունների վերաբերյալ կնքված պայմանագրի հիման վրա:
- Բենչմարքինգի իրականացումը կատարվում է համալսարանի՝ Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ ռեկտորատի որոշման հիման վրա:
- Բենչմարքինգի իրականացման վերահսկողությունն ու ընդհանուր ղեկավարությունը իրականացնում է՝ համապատասխան ոլորտն համակարգող պրոռեկտորը:
- Պահանջվող ծախսերը հոգալու նպատակով՝ միջոցների հատկացումը ֆինանսական վարչության ներկայացմամբ, կատարվում է համակարգող պրոռեկտորի ներկայացմամբ՝ ռեկտորի հրամանով: Իսկ եթե կան ֆինանսավորման այլ աղբյուրներ, համակարգող պրոռեկտորի կողմից դրանց մասին կազմվում է համապատասխան զեկուցագիր և ներկայացվում ռեկտորատ:
- Բենչմարքինգի արդյունքների մասին բենչմարքինգն իրականացրած խմբի ղեկավարի կողմից հաշվետվություն է ներկայացվում համակարգող պրոռեկտորին:

- Բենչմարքինգի արդյունքների հիման վրա՝ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվում, համակարգող պրոռեկտորի հետ քննարկվում և ռեկտորատ է ներկայացվում միջոցառումների ծրագիր՝ ուղղված ուսումնասիրված խնդիրների լուծմանը և նոր գործընթացների ներդրմանը:
- Յուրաքանչյուրուսումնականտարվաավարտին (հուլիս-օգոստոս ամիսներին), համալսարանիյուրաքանչյուրստորաբաժանմանղեկավարներկայացնումէբենչմարքինգ իուղղությամբկատարվածարդյունքներիհաշվետվություն:

*6. Գծ. 1. Բենչմարքինգի գործընթացի սխեման.*

Ինքնավերլուծություն, բուհի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում

↓

Բենչմարքինգի առարկայի, նպատակի, խնդիրների սահմանում

↓

Բենչմարքինգի իրականացման համար՝ գործընկեր կազմակերպության ընտրություն և պայմանավորվածության ձեռքբերում

↓

Բենչմարքինգի աշխատանքային ծրագրի և պլանի կազմում

↓

Գործ ընկեր կազմակերպությունում, համապատասխան ոլորտներում, ուսումնասիրությունների իրականացում

↓

Գործընկեր կազմակերպության, նույն ոլորտների, ուժեղ կողմերի համեմատական վերլուծություն

↓

Բենչմարքինգի արդյունքների անփոփում և հաշվետվության կազմում

↓

Որակի բարելավման նպատակով՝ բենչմարքինգի արդյունքների վրա հիմնված միջոցառումների պլանի կազմում

## Հավելված 5. ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1. «Հայբուսակ» համալսարանի (այսուհետ Համալսարան) ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների գործունեության որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքների, Համալսարանի կանոնադրության, գիտական խորհրդի որոշումների, ռեկտորի հրամանների և սույն կարգի:

1.2. Սույն կարգը սահմանում է դասախոսների ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և հասարակական աշխատանքների գնահատման չափանիշները, տարեկան գործունեության վարկանիշի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցիչների կազմը, ինչպես նաև դրանց անցկացման ընթացակարգը:

1.3. Վարկանիշային գնահատման նպատակը Համալսարանի գործունեության

արդյունավետության և որակի բարձրացմանը միտված ուսումնական տարվա արդյունքներով պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական, ուսումնական, գիտման-կավարժական և հասարակական գործունեության արդյունավետության գնահատումն է:
1.4 Վարկանիշային գնահատման արդյունքները ռեկտորի համար հանդիսանում են տեղեկատվության աղբյուր ու համալսարանի կառավարումը կատարելագործելու գործիք:

**2. Վարկանիշավորման հիմնական նպատակներն են.**

- Ձևավորել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համալիր չափանիշներ,
- Ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքները գնահատելու ընդհանրական գնահատման համակարգ,
- Խթանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների շարունակական աճը, ուսումնակազմակերպչական գործունեության ակտիվությունը և նախաձեռնողականությունը,
- Նպաստել գիտահետազոտական և մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- Խրախուսել ներհամալսարանական և հանրային գիտակրթական և հասարակական գործունեությունը,
- Հաշվի առնել ուսանողների և գործընկերների կարծիքը դասավանդման և ուսումնառության որակի ու արդյունավետության վերաբերյալ, ձևավորել համապատասխան հետևություններ ու երաշխավորություններ:

**3. Վարկանիշային գնահատման սկզբունքները**

- Գնահատման թափանցիկություն, օպերատիվություն և համակարգվածություն,
- Ստացված տեղեկատվության օբյեկտիվություն և հավաստիություն,
- Գնահատման տարբեր ձևերի համատեղում,
- Բարձր վարկանիշ ստացած մասնակիցների խրախուսում:

**4. Վարկանիշի ձևավորումը**

Վարկանիշային գնահատման արդյունքը ձևավորվում է դասախոսի գիտամանկա-վարժական, գիտահետազոտական և հասարակական գործունեությամբ, ինչպես նաև նրա աշխատանքի արդյունավետության վերաբերյալ ֆակուլտետի, ամբիոնի և ուսանողության գնահատականներով: Այդ նպատակով կիրառվում է հատուկ ձևաթերթ, որը պարունակում է տվյալներ դասախոսի գործունեության վերաբերյալ, ըստ հետևյալ բաղադրիչների.

1. ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական տարեկան աշխատանք,
2. որակական առաջընթացի ցուցիչ,
3. գիտահետազոտական և գիտամեթոդական տարեկան աշխատանք,
4. գնահատում գործընկերների և ուսանողական համակազմի կողմից
5. աշխատանք ուսանողների հետ, ներհամալսարանական հանրային ծառայություններ

Յուրաքանչյուր բաղադրիչ ներառում է գնահատման որոշակի ցուցիչներ՝ համապատասխան գործակիցներով, որոնց միջոցով հաշվարկվում է տվյալ բաղադրիչի ընդհանուր վարկանիշը:

**5. Գնահատման գործընթացի կազմակերպումը**

1. Դասախոսների վարկանիշային գնահատումն ընդգրկում է դասախոսի

գործունեությունը յուրաքանչյուր տար¬վա սեպտեմբերի 1-ից մինչև հունիսի 30-ը:

2. Գնահատման արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա օգոստոսի վերջը՝ դասախոսների վարկանիշային միավորների տեսքով:
3. Վարկանիշային գնահատման բոլոր բաղադրիչների ձևավորումն իրականացվում է համապատասխան հավաստող փաստաթղթերի հիման վրա:
4. վարկանիշային գնահատման գործընթացների ընդհանուր համակարգումն իրականացնում են համապատասխան ստորաբաժանումները (ֆակուլտետ, ամբիոն) և կրթության որակի ապահովման կենտրոնը (ԿՈԱԿ): Ընդ որում՝ ֆակուլտետը, ամբիոնը համակարգում են տվյալների հավաքագրման գործընթացը, ապահովում են դրանց ամբողջականությունը և ներկայացնում են ԿՈԱԿ:

**Ամփոփիչ դրույթներ**

Վարկանիշային գնահատման արդյունքները կարող են կիրառվել հետևյալ նպատակներով.

- Ֆակուլտետի, ամբիոնի և առանձին դասախոսների գործունեության արդյունավետության գնահատման և դրա հիման վրա մասնագիտական, ուսումնամեթոդական, գիտամեթոդական, գիտամանկավարժական և գիտահետազոտական կարողությունների ու հմտությունների բարելավմանն ուղղված եզրակացությունների և երաշխավորությունների ձևավորման համար,
- Դասախոսների ներքին և արտաքին խրախուսման տարբեր ձևերի կիրառման և աշխատանքի վարձատրության տարբերակված համակարգի ներմուծման համար:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

ԴԱՍԱԽՈՍԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

**Դասախոս** _____

**Ամբիոն** _____

**Ֆակուլտետ** _____

**Ընդհանուր աշխատանքային փորձը** ———————— **տարի, որից ԵՀՀ-ում՝** ————————

| հհ | **Գործունեության տեսակը** | **Միավորները** | **Հիմքերը/ մասնավորեցումը** |
|---|---|---|---|
| 1 | Ուսումնամեթոդական գործունեություն (գնահատական ըստ դասալսման արդյունքների) դասախոսություն, գործնական աշխատանք, լաբորատոր պարապմունքներ | Յուրաքանչյուրը 10 | |
| 2 | Տպագրված ուսումնամեթոդական աշխատանքներ և ընդհանուր/մասնագիտական նոր դասընթացի մշակում | Յուրաքանչյուրին՝ 10 | Օր՝ ուսումնական ձեռնարկ և այլն |
| 3 | Էլեկտրոնային միջոցների կիրառում դասավանդման ընթացքում (գնահատական ըստ դասալսման արդյունքների) | 5 | |
| 4 | Օտար լեզուների իմացությունն ու կիրառումը գիտամանկավարժական և գիտահետազոտական գործունեության ընթացքում (գնահատական ըստ դասալսման արդյունքների) | 5 | |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Մասնակցություն կրթական բարեփոխումների գործընթացին (ՄԿԾ մշակում) | 5 | |
| 6 | Ուսումնակազմակերպչական գործունեություն՝<br>Ամբիոնի ղեկավարում<br>Համալսարանի գիտխորհրդի/ֆակուլտետային կամ այլ խորհուրդների/ հանձնաժողովների անդամակցություն և պատշաճ մասնակցություն | <br>5<br>5 | |
| 7 | Գիտական աշխատանքներ՝<br>Մենագրություն<br>Գիտական հոդված<br>Զեկույցներ գիտաժողովներում<br>Գյուտի արտոնագիր<br>այլ | Յուրաքանչ.՝ 3 | |
| 8 | Գիտական կոչում, աստիճան, կամ հավասարազոր՝<br>Գիտ. Դոկտոր<br>Գիտ. թեկնածու<br>Պրոֆեսոր<br>Դոցենտ<br>ԵՀՀ ասպիրանտի, հայցորդի ղեկավարում | <br>6<br>5<br>5<br>4<br>2 | |
| 9 | Աշխատանք ուսանողի հետ (ՀՀ և միջազգային ստեղծագործական ցուցահանդեսներին և ֆորումներին, օլիմպիադաներին մասնակցություն (այդ թվում անհատական ցուցահանդեսներ), ուսանողների նախապատրաստում, դասախոսի ղեկավարությամբ ուսանողի հրատարակած հոդված, թեզիս, զեկույց, քննություններ, Ուսանողական գիտական ընկերության անդամների աշխատանքների ղեկավարում, այլ) | 12 | |
| 10 | Գիտակազմակերպչական գործունեություն՝ Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին, Գիտական աստիճանաշնորհման խորհուրդների անդամ | Յուրաքանչյուրին 10 | |
| 11 | Արտահամալսարանական գործունեություն՝<br>Մասնակցություն արտահամալսարանական հանձնաժողովներում, փորձագիտական աշխատանքներում | Յուրաքանչյուրին 5 | |
| 12 | Ուսանողների կողմից դրական գնահատական | 10 | |

**Էթիկայի կանոնների և Աշխատանքային կարգապահության խախտում ունեցող դասախոսները չեն կարող հավակնել տվյալ ուստարվա վարկանիշային գնահատման արդյունքներով խրախուսման:**

**Առավելագույն միավորներ ստացած պրոֆեսորադասախոսական կազմի անդամները ենթակա են խրախուսման:**

Խրախուսում՝

1-ին հորիզոնական՝ «Տարվա լավագույն դասախոս» կոչում և 1-ին կարգի դրամական պարգև և կրթաթոշակ (scholarship)

2-րդ հորիզոնական՝ կրթաթոշակ, 2-րդ կարգի դրամական պարգև և պատվոգիր

3-րդ հորիզոնական՝ 3-րդ կարգի դրամական պարգև և պատվոգիր
4-6-րդ հորիզոնական՝ հուշանվեր և շնորհակալագիր
7-10-րդ հորիզոնական՝ շնորհակալագիր։
**Միավորների նվազագույն շեմը չհաղթահարած պրոֆեսորադասախոսական կազմի անդամներին հնարավորություն է տրվում 6 ամսվա ընթացքում (1 կիսամյակ) անցնել համապատասխան վերապատրաստումներ և հաջորդ կիսամյակում շարունակել համագործակցությունը ԵՀՀ-ի հետ:**

Անցողիկ միավորը՝ 60։

***ՀԱՎԵԼՎԱԾ 2***. ՎԱՐԿԱՆՇԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԽՈՍԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԵՏ

| ԲԱԼԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ԺԱՄԱՎՃԱՐ, դրամ |
|---|---|
| 91-100 | 3100-3500 |
| 81-90 | 2600-3000 |
| 71-80 | 2100-2500 |
| 61-70 | 1500-2000 |

## Հավելված 6. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են Երևանի «Հայբուսակ» համալսարանում (այսուհետ՝ ԵՀՀ) դասալսումների կազմակերպման, անցկացման, քննարկման և արդյունքների ամփոփման սկզբունքները, նպատակներն ու ընթացակարգը։

1.2. Կանոնակարգը մշակված է հիմք ընդունելով ԵՀՀ կանոնադրությունը և ոլորտին առնչվող իրավական ակտեր։

1.3. Կանոնակարգը միտված է ԵՀՀ-ում ուսուցման գործընթացի և ուսումնամեթոդական աշխատանքների որակի բարելավմանը։

1.4. Սույն Կանոնակարգը հաստատում և նրանում փոփոխություններ է կատարում ԵՀՀ Խորհուրդը։

### 2. ԴԱՍԱԼՍՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Դասալսումն ուսումնական գործընթացի բարելավման միջոց է, և կազմում է դասավանդողի ուսումնամեթոդական աշխատանքների բաղկացուցիչ մասը։

2.2. Դասալսման ենթակա դասերն են՝

- բաց դասը - որի նպատակն է՝ դասավանդման նոր մեթոդների և մանկավարժական հնարների փորձարկումը, առավել փորձառու մասնագետների և գործընկերների կարծիքների ու խորհուրդների ստացումը՝ առաջավոր փորձի փոխանակման և տարածման նպատակով,

- ցուցադրական դասը - որն իրականացնում է առավել փորձառու մասնագետը՝ դասի արդյունավետ կազմակերպումը, դասավանդման մեթոդիկան, տեխնիկական միջոցների կիրառումը և նոր միջոցների արդյունավետ օգտագործումը փոխանցելու նպատակով:

- դասախոսությունները, սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքները:

2.3. Ըստ կազմակերպման դասալսումը կարող է լինել՝

2.3.1. պլանավորված՝

- ամբիոնի վարիչի գլխավորությամբ ձևավորված հանձնախմբի կողմից՝ դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակների ուսումնասիրման և գնահատման նպատակով:

- փոխադարձ – իրականացվում է դասավանդողների միջև՝ փորձի փոխանակման, առաջավոր փորձի տարածման, դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման, դասավանդման մեթոդների ընտրության հարցերում փոխադարձ օգնության նպատակով (արդյունքները ներկայացվում են ամբիոնի նիստին):

2.3.2. չպլանավորված՝

- ըստ անհրաժեշտության կարող է իրականացվել ռեկտորի գիտությամբ՝ որոշակի խնդրի լուծման նպատակով,

- հրավիրյալ և օտարերկրյա այլ մասնագետի կողմից վարվող ցուցադրական դասերը (արդյունքները ներկայացվում են ամբիոնի նիստին):

## 3. ԴԱՍԱԼՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Դասալսումների հիմնական նպատակն է՝

- դասախոսությունների, գործնական և ուսումնական այլ պարապմունքների կազմակերպման ձևերի և ուսուցման որակի գնահատումն ու բարելավումը,

- դասավանդող կազմի մասնագիտական զարգացման խթանումը:

3.2. Դասալսումների նպատակներն են՝

- դասավանդողի մասնագիտական և մանկավարժական կարիքների վերհանումը,

- դասավանդման գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը,

- դասընթացի վերջնարդյունքների և դասի նպատակների ու խնդիրների համապատասխանության ստուգումը,

- դասավանդման առաջատար փորձի կիրառումը:

## 4. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՃԱԽՄԱՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Դասալսումներ կազմակերպելու համար ուսումնական տարվա սկզբին ամբիոնը և ուսումնամեթոդական մասը քննարկում և կազմում են դասալսումների ժամանակացույց: Արտակարգ իրավիճակի պայմաններում դասալսումները կարող են կազմակերպվել նաև առցանց տարբերակով:

4.2. ԵՀՀ ռեկտորի, պրոռեկտորների, տնօրենների նախաձեռնությամբ, անհրաժեշտության դեպքում, կարող է իրականացվել դասալսում արդեն հաստատված ժամանակացույցից դուրս՝ առանց դասախոսին տեղեկացնելու:

4.3. Դասալսող հանձնախմբերի կազմում են՝ ամբիոնի վարիչը, տվյալ ամբիոնի կազմից առնվազն մեկ դասախոս, ուսումնական գործընթացում ներառված ստորաբաժանումների ղեկավարներից մեկը և տվյալ դասավանդողի և դասընթացի հետ չառնչվող ուսանող, որի համար նախատեսված է դասալսման գնահատման հատուկ ձևաչափ։

4.4. Դասալսումներին, անհրաժեշտության դեպքում, կարող են մասնակցել հրավիրյալ փոձագետներ որակի ապահովման, դասավանդման գործընթացի ուսումնասիրման և գնահատման նպատակով։

4.5. Յուրաքանչյուր ինստիտուտ (նաև ակադեմիան) ամեն կիսամյակում պարտավոր է պլանավորել ու անցկացնել առնվազն 4 դասալսում։

## 5. ԴԱՍԱԼՍՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5.1.Դասալսման անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ ըստ համապատասխան ձևաչափի (տես Հավելվածը)։

5.2. Դասալսումից հետո դասալսման արդունքները հանձնաժողովը քննարկում է նախ դասավանդողի հետ, այնուհետև ամբիոնի նիստում։

5.3. Դասալսման արդյունքների և քննարկումների վերաբերյալ առարկություն ունենալու դեպքում դասավանդողը կարող է այն գրավոր ներկայացնել տնօրենին։

5.3. Դասալսման արդյունքների քննարկման վերաբերյալ ամբիոնի արձանագրության քաղվածքն, ըստ անհրաժեշտության, ներկայացվում է ԵՀՀ համալսարանական խորհրդին, ամբիոնին և Զարգացման և կրթության որակի ապահովման կենտրոնին (ԶԿՈԱԿ)։

5.4. Դասալսում չանցկացնելու դեպքում ամբիոնի նիստում քննարկվում է պատճառը և նշանակվում է դասալսման անցկացման նոր օր։

5.5. Դասալսումների կազմակերպման, անցկացման, արդյունքների քննարկման, գնահատման գործընթացների ապահովման պատասխանատվությունը վերապահվում է ամբիոնի վարիչին։

## 6. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6.1. Դասալսումն իրականացնող հանձնախմբի անդամները պարտավոր են.

- ծանոթ լինել սույն Կանոնակարգի հավելվածում ներկայացված դասալսումների անցկացման և արդյունքների գնահատման օրինակելի ձևաչափին,
- նախապես ծանոթանալ առարկայական ծրագրին, դասի նպատակներին ու խնդիրներին, թեմային և ուսումնական նյութերին,
- պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները (ժամանակին ներկայանալ դասալսման՝ չմիջամտելով դասի բնականոն ընթացքին)։

## 7. ԴԱՍԱԼՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

7.1. Դասալսումների արդունքները հաշվի են առնվում՝

- դասախոսի հետ նոր աշխատանքային պայմանագիր կնքելիս կամ աշխատանքային պայմանագրում փոփոխություն կատարելիս,

- մրցութային հանձնաժողովի կողմից՝ մրցույթներին դասախոսի մասնակցության դեպքում,
- դասախոսի վերապատրաստման ուղղությունների ու թեմաների ընտրության ժամանակ,
- Դասավանդող կազմի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգի հավելվածում լրացուցիչ միավորները հաշվելիս:

7.2. Դասալսումների վերլուծության արդյունքների հիման վրա կարող են՝

- տրամադրվել խորհրդատվություններ, որոնք բխում են դասավանդող կազմի մասնագիտական որակների զարգացման և ԵՀՀ-ի ուսումնական գործընթացի բարելավման անհրաժեշտությունից,
- առաջարկվել կրկնակի դասալսումներ:

**ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱՉԱՓ**

| | |
|---|---|
| Դասալսումն իրականացնող հանձնախմբի անդամների տվյալները՝<br>- անուն, ազգանուն, հայրանուն<br>- գիտական աստիճան, կոչում (առկայության դեպքում) - զբաղեցրած պաշտոն | |
| Դասավանդողի տվյալները՝<br>- անուն, ազգանուն, հայրանուն<br>- գիտական աստիճան, կոչում (առկայության դեպքում)<br>- զբաղեցրած պաշտոն | |
| Մասնագիտության կրթական ծրագրի անվանումը | |
| Դասի (առարկայի) անվանումը | |
| Թեմայի անվանումը | |
| Դասի տիպը (դասախոսություն, գործնական պարապմունք, սեմինար, լաբորատոր աշխատանք) | |
| Դասալսման տևողությունը | |
| Դասին ներկա գտնվող ուսանողների թիվը | |
| Դասալսման անցկացման ամսաթիվ | |

| N | Դասի բովանդակության գնահատում | Դասի անցկացման ձևի և կազմակերպման գնահատում | | |
|---|---|---|---|---|
| | | Նախընտրելի (օպտիմալ) | Թույլատրելի (ընդունելի) | Շտկման ենթակա (անընդունելի) |
| 1. | Դասի նպատակների ու խնդիր–ների համապատասխանությունը դասընթացի վերջնարդյունքներին և առարկայական նկարագրի թեմատիկ բաշխվածությանը | | | |
| 2. | Նյութին առնչվող գիտական առաջադեմ տեսությունների և/կամ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեսակետների, ձեռքբերումների ներկայացում և քննարկում | | | |
| 3. | Ընտրված մեթոդների համապատասխանությունը դասի նպատակներին և խնդիրներին | | | |
| 4. | Դասավանդողի խոսքի մշակույթի առկայություն և հարցադրումների ժամանակ բարյացակամության դրսևորում, նյութի հաղորդման պարզություն, հետևողական և տրամաբանական շարադրում | | | |
| 5. | Տրամաբանական կապը դասի նախորդ և հաջորդ թեմաների հետ | | | |
| 6. | Անհատական և խմբային աշխատանքների կազմակերպում, նյութին առնչվող հանձնարարությունների օգտակարություն | | | |
| 7. | Կրթական և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում | | | |
| 8. | Դասավանդողի կողմից կիրառվող ուսանողակենտրոն մեթոդներ ու մոտեցումներ (համագործակցա–յին/ ինտերակտիվ, թիմային, անհատական և այլն) | | | |
| 9. | Ուսանողների ինքնուրույն, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման խթանում | | | |
| 10. | Դասավանդողի կազմակերպվա–ծություն և դասին հատկացված ժամանակի կառավարում | | | |

Դասի անցկացման ձևի և կազմակերպման գնահատումը կատարվում է համապատասխան սանդղակում հետևյալ նշումով՝ V:

| | |
|---|---|
| Դասի ուժեղ կողմերը (դրական) | |
| Դասի թույլ կողմերը (բացասական) | |

| | |
|---|---|
| Հանձնախմբի կողմից ներկայացվող դիտողություններ | |
| Հանձնախմբի կողմից ներկայացվող առաջարկություններ | |
| Դասալսումն իրականացրեցին՝ | Ա.Ա.Հ. (ստորագրություն)<br>Ա.Ա.Հ. (ստորագրություն) |

| | |
|---|---|
| | Ա.Ա.Հ. (ստորագրություն) |
| Վերոշարադրյալի հետ համաձայն եմ (դասավանդողը)՝ | Ա.Ա.Հ. (ստորագրություն) |
| Հատուկ կարծիք (առկայության դեպքում) | |

## ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

| Դասավանդող՝<br>Ամիս, ամսաթիվ՝<br>Դասախոսության թեմա՝ | Անընդունելի | Բարեբավման կարիք կա | Լավ | Գերազանց | Օրինակելի |
|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Դասավանդող** | | | | | |
| Եռանդ | | | | | |
| Վերաբերմունք ուսանողների նկատմամբ | | | | | |
| Ինտերակտիվ համագործակցություն լսարանի հետ | | | | | |
| **Դասընթաց** | | | | | |
| Նյութի ներկայացումը գրավիչ էր և կազմակերպված | | | | | |
| Նյութը բացատրվել է օգտագործելով դեպքերի ուսումնասիրություններ և գործնական օրինակներ | | | | | |
| Աուդիովիզուալ նյութերի որակը | | | | | |
| **Բովանդակություն** | | | | | |
| Դասավանդման ընթացքում ներկայացվել են համապատասխան գրականության աղբյուրներ | | | | | |

**Որո՞նք էին դասախոսության երկու լավագույն կողմերը:**

1.

2.

**Դասավանդման բարելավման ի՞նչ առաջարկություն ունեք:**

1.

2.

**Այլ նկատառումներ՝ ընդհանուր առմամբ, ի՞նչ տվեց Ձեզ այս դասալսումը.**

## Հավելված 7. ԵՀՀ ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[5]

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ):

Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս հիմք են ծառայել նաև «Հայբուսակ» համալսարանի կանոնադրության, ռազմավարական ծրագրի պահանջները,

որոնց կարևորագույն նպատակը համապատասխան գիտելիքներով, հմտություններով, կարողություններով օժտված մասնագետի, մարդու և քաղաքացու ձևավորումն է:

*Ուսանողն իրավունք ունի՝*

- սեփական հայեցողությամբ ընտրելու մասնագիտությունը, ուսուցման ձևը, ստանալու միջազգային կրթական չափորոշիչներին համապատասխանող գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,
- հաճախելու համալսարանում անցկացվող պարապմունքներին, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կանոնակարգերին,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է համալսարանում կամ այլ բուհում՝ այդ բուհի սահմանած կարգով և պայմաններով,
- օգտվելու համալսարանի գրադարանից, տեղեկատվական պահոցներից, լաբորատորիաներից, կաբինետներից, ուսումնական, գիտական, մարզական, առողջապահական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու բուհի ամբիոնների գիտահետազոտական ծրագրերին, գիտաժողովներին, սեմինարներին,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը,
- ընտրելու և ընտրվելու համալսարանի կառավարման մարմիններում, ուսանողական հասարակական կազմակերպություններում, մասնակցելու դրանց աշխատանքներին, հանդես գալու առաջարկություններով,
- քննաշրջանի ժամանակացույցում, քննությունների և ստուգարքների օրերի և հերթականության որոշման ժամանակ, ներկայացնելու առաջարկություններ,
- բողոքարկելու համալսարանի ղեկավարության որոշումները, հրամաններն ու կարգադրությունները, քննությունների, այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման արդյունքները,
- օգտվելու ուսման վարձի զեղչերից, ստանալու կրթաթոշակներ, դրամաշնորհներ,
- օգտվելու տարկետման իրավունքից՝ մինչև մեկ տարի ժամկետով,
- տվյալ ուսումնական տարվա ընթացքում, առնվազն երկու անգամ, օգտվել արձակուրդից, ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում երկու շաբաթ՝ ձմռանը,

- փոխադրվելու մեկ այլ, ներառյալ օտարերկրյա բուհ, միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում՝ ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ՝ ներառյալ օտարերկրյա բուհում,
- օրինակելի վարքի, ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար արժանանալու բարոյական և/կամ նյութական խրա-խուսանքի,
- ընտրելու տվյալ մասնագիտության(մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և կամընտրական դասընթացներ՝ կրթական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական խմբերի առկայության դեպքում կատարելու ընտրություն՝ ելնելով դասախոսին տրված նախապատվությունից և/կամ դասընթացի կայացման ժամանակացույցից,
- սահմանված կարգով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ շրջանի համար,
- համալսարանի հետ, ուսումնառության պայմանների վերաբերյալ, կնքելու պայմանագիր:

*Ուսանողը պարտավոր է՝*

- ծանոթանալ համալսարանի կանոնակարգերին և խստորեն հետևել դրանց պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները, ուսումնական պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները,
- կանոնավոր հաճախել ուսումնական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել բոլոր ստուգարքներն ուքննությունները,
- հոգատարությամբ վերաբերվել համալսարանի գույքին, քանզի համալսարանի գույքին պատճառված վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն,
- լինել կարգապահ, համալսարանի տարածքում, ուսումնական, ուսումնաարտադրական և այլ շենքերում պահպանել մաքրություն,
- պահպանել հասարակության բարոյական նորմերը, համալսարանի էթիկայի կանոնները, ձեռնպահ մնալ գրագողությունից,
- հոգ տանել համալսարանի պատվի ու հեղինակության մասին,
- պատասխանատվություն ստանձնել՝ իր կողմից ընտրված դասընթացների ժամերի համընկման համար,
- ժամանակին վճարել ուսման վարձը,

- հարգելի պատճառով, ուսումնական պարապմունքներին չներկայանալու դեպքում, այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին, իսկ համալսարան ներկայանալու առաջին իսկ օրը՝ տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին,
- հիվանդության դեպքում, ֆակուլտետի դեկանին, ներկայացնել համապատասխան փաստաթուղթ:

## Հավելված 8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԿԾ-ՆԵՐԵՐԻ ՑԱՆԿ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը տրամադրում է կրթություն և իրականացնում կրթական ծրագրեր հետևյալ 18 մասնագիտություններով.

1. Բուժական գործ (անընդհատ և ինտեգրացված)
2. Ստոմատոլոգիա (անընդհատ և ինտեգրացված)
3. Ֆարմացիա (բակ., մագ.)
4. Բնապահպանություն և բնօգտագործում (բակ.)
5. Տնտեսագիտություն (բակ., մագ.)
6. Կառավարում (բակ., մագ.)
7. Ֆինանսներ (բակ., մագ.)
8. Ինֆորմատիկա (բակ., մագ.)
9. Իրավագիտություն (բակ., մագ.)
10. Միջազգային հարաբերություններ (բակ., մագ.)
11. Հոգեբանություն (բակ., մագ.)
12. Մասնագիտական մանկավարժություն (բակ., մագ.)
13. Ընդհանուր մանկավարժություն (բակ., մագ.)
14. Հայոց լեզու և գրականություն (բակ., մագ.)
15. Լրագրություն (բակ.)
16. Դիզայն (բակ., մագ.)
17. Գեղանկարչություն (բակ., մագ.)
18. Հագուստի մոդելավորում (բակ., մագ.):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, Ե., 2004:
2. Բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավերլուծության գործընթացի մեթոդաբանություն և գործիքներ (Մեթոդական ցուցումներ), Ե., 2013:
3. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի ապահովման ուղեցույց, Ե., 2016:
4. ԵՊԲՀ որակի ապահովման քաղաքականություն, Ե., 2013:

5. ԵՊՀ-ի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողների համար, Ե., 2016:
6. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, Ե., 2003:
7. Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի որակի ներքին ապահովման ուղեցույց, Ե., 2012:
8. Կարգ ՀՀ բուհերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման:
9. Կարգ ՀՀ բուհերում ուսանողների հեռացման(ազատման) և վերականգնման:
10. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք (ՀՊՃՀ), Ե., 2006:
11. «Կրթության մասին» ՀՀ օրենք, Ե., 1999:
12. Հայեցակարգ Երևանի պետական համալսարանի որակի ապահովման, Ե., 2012:
13. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 2016-2020թթ. իրականացման ռազմավարություն, Ե., 2016:
14. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի օգտագործման ուղեցույց, Ե., 2017:
15. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 101 եզրույթների բացատրական բառարան, Ե., 2017:
16. ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ (ուսումնամեթոդական ուղեցույց), Ե., 2013:
17. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ. «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում», Ե., 2011:
18. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Ե., 2015:
19. Որակի ապահովման բուհական համակարգեր (ուղեցույց), Ե., 2009:
20. Որակի ապահովման տերմինաբանական բառարան, Ե., 2010:
21. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2008:
22. Ուսումնական նյութերի ժողովածու (Tempus), Ե., 2014: